

Դատական գործ N: ԵԱՆԴ/0071/01/11

Երբ է գործը ստացվել:	24-06-2011
Քրեական գործի համարը:	ԵԱՆԴ/0071/01/11
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Նախաքննական գործի համարը:	58209610
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	Միքայել Թումայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա բնակվելով ՌԴ Մոսկվա քաղաքում, գրանցվել է համակարգչային համակարգեր ներխուժող և այնտեղից համապատասխան տեղեկություններ որսացող անձանց, ինչպես նաև բանկային քարտերի և հաշվեհամարների հետ կապված տարատեսակ զեղծարարություններով զբաղվող անձանց համար ստեղծված <cardingworld> և < maza faka > համացանցային ֆորումներում՝ համապատասխանաբար <matrix> և < gildersleeve> համացանցային կեղծանուններով: Նշված ֆորումների հաճախորդների հետ համացանցով շփումների ընթացքում հնտություններ է ձեռք բերել վճարային փաստաթղթեր հանդիսացող բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ պատրաստելու, դրանց միջոցով տեղեկությունների օգտագործմամբ հափշտակություններ կատարելու գործում և դրանով զբաղվել է մինչև 2010թ. հուլիսի 9-ին <Զվարթնոց> օդանավակայանում ձեռքբերվելով:
Մեղադրյալ Անձ	
Անուն	Միքայել
Ազգանուն	Թումայան
Հայրանուն	Ռուբենի
Հասցե	Մոլդովական փողոց, 40 շենք, 14 բնակարան:
Ծննդյան ամսաթիվ	29-09-1974
Հոդված_1	
Հոդված	177 Մաս 3 Կետ 1,2
Հոդված_1	
Հոդված	203 Մաս 3 Կետ 2
Հոդված_1	
Հոդված	38-325 Մաս 1
Հոդված_1	
Հոդված	190 Մաս 3 Կետ 2
Դատվածություն:	չդատված
Պաշտպան	
Անուն	Սամվել
Ազգանուն	Շարբաթյան
Հասցե	չկա
Վիճակագրական տողի համարը:	7.5
Իրեղեն ապացույց	

Իրեղեն ապացույցի անվանումը:	
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:	
Խախտման միջոց:	Կալանավորում
Չափահաս:	Այո
Երբ:	28-06-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Ավան և Նոր-Նորք
Դատավորի անուն:	Արմեն Ղազարի Վարդապետյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Ավան և Նոր-Նորք
Դատավորի անուն:	
Երբ:	06-07-2011
Որոշումը ուղարկվել է կողմերին:	06-07-2011
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	06-07-2011
Այլ նշումներ:	
Երբ:	18-07-2011
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Մեղադրող
Դատավարության կողմեր	
Անուն	Միքայել
Ազգանուն	Թումայան
Հայրանուն	Ռուբենի
Հասցե	<<Երևան-Կենտրոն>>ՔԿՀ
Դատավարության կողմեր	
Անուն	Սամվել
Ազգանուն	Շարբայան
Հասցե	ք. Երևան, Ավան 5փ., 42 տուն
Այլ նշումներ:	
Ժամ:	12:00
Դատավարության կողմեր	
Անուն:	<< Գլխավոր Դատախազություն
Հասցե:	ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Նիստերի դահլիճի համարը:	1
Երբ:	02-08-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	

Երբ:	12-08-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Երբ:	19-08-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	
Երբ:	23-08-2011
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	
Երբ:	01-09-2011
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	
Երբ:	14-09-2011
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ նշումներ:	
Երբ:	03-10-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Երբ:	12-10-2011
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Երբ:	25-10-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	

Երբ:	04-11-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Երբ:	18-11-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Երբ:	29-11-2011
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Երբ:	08-12-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Նիստը:	
Պատճառը:	
Երբ:	09-12-2011
Ժամ:	17:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Նիստը:	
Պատճառը:	
Երբ:	15-12-2011
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Նիստը:	
Պատճառը:	
Երբ:	22-12-2011
Ժամ:	16:30
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Նիստը:	
Պատճառը:	

Երբ:	23-12-2011		
Ժամ:	12:00		
Նիստերի դահլիճի համարը:	2		
Այլ նշումներ:			
Նիստը:			
Պատճառը:			
Ամսաթիվ:	23-12-2011		
Այլ նշումներ:			
Մեղադրյալ			
Անուն	Միքայել		
Ազգանուն	Թումայան		
Հայրանուն	Ռուբենի		
Հասցե	ՀՀ ԱՆ <Երևան-Կենտրոն> ՔԿՀ		
Ամսաթիվ:	23-12-2011		
Առավել ծանր հանցագործության հոդված			
Հոդված	203	Մաս 3	Կետ 2
Առավել ծանր հանցագործության հոդվածով:			
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	177	Մաս 1	Կետ 2
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	190	Մաս 3	Կետ 2
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	38-325	Մաս 1	
Այլ հանցագործության հոդվածներով:			
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում		
Լրացուցիչ պատիժ:			
Այլ պատժաչափեր:			
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):			
Բռնագանձնված գույքի չափը:	գույքի մեկ քառորդի բռնագրավմամբ, բայց ոչ ավելի քան 134178839 դրամի չափով		
Պատկան ակտի բովանդակությունը:	Գործ ԵԱՆԴ/0071/01/11 Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն		

23 դեկտեմբերի 2011 թվական քաղաք Երևան
Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների
ընդհանուր իրավասության
առաջին աստիճանի դատարանը՝

Նախագահությամբ դատավոր՝ Ա. Վարդապետյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Հախնազարյանի
Մասնակցությամբ՝
Մեղադրող՝ Հ. Սարգսյանի
Պաշտպան՝ Ս. Շարբայանի

Դռնբաց դատական նիստում, քննեց քրեական գործն ըստ
մեղադրանքի՝ Միքայել Ռուբենի Թումասյանի /ծնված՝ 29.09.1974թ.
քաղաք Երևան, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն
կրթությամբ, ամուսնացած, չի աշխատում, նախկինում չհատված,
հաշվառված է ք. Երևան, Մոլդովական փողոց, 40 շ., 14 բն./ ՀՀ
քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ
կետերով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 190-րդ հոդվածի
3-րդ մասի 2-րդ կետով և 38-325-րդ հոդվածի 1-ին մասով

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Թիվ 58209610 քրեական գործով նախաքննական մարմնի կողմից
Միքայել Ռուբենի Թումասյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 203-րդ հոդվածի 3-րդ
մասի 2-րդ կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-
325-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի
համար, որ նա բնակվելով Ռուսաստանի Դաշնության Մոսկվա
քաղաքում, գրանցվել է համակազմային համակարգեր ներխուժող և
այնտեղից համապատասխան տեղեկություններ որսացող անձանց,
ինչպես նաև բանկային քարտերի և հաշվեհամարների հետ կապված
տարատեսակ գեղծարարություններով զբաղվող անձանց համար
ստեղծված «cardingworld» և «maza faka» համացանցային
ֆորումներում՝ համապատասխանաբար «matrix» և «gildersleeve»
համացանցային կեղծանուններով: Նշված ֆորումների
հաճախորդների հետ համացանցով շփումների ընթացքում
հմտություններ է ձեռք բերել վճարային փաստաթղթեր հանդիսացող
բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ պատրաստելու, դրանց
միջոցով կամ դրանց վրա գրառված տեղեկությունների
օգտագործմամբ հափշտակություններ կատարելու գործում և
դրանով զբաղվել մինչև 2010 թվականի հուլիսի 9-ին Երևանի
«Զվարթնոց» օդանավակայանում ձերբակալվելը:

Այսպես, Միքայել Թումասյանը 2008 թվականի սեպտեմբերի
սկզբներին, գտնվելով Ռուսաստանի Դաշնության Մոսկվա
քաղաքում, համացանցային շփումների ընթացքում ծանոթացել է
քննությամբ դեռևս չպարզված՝ «Loader» կեղծանուն օգտագործող
անձնավորության հետ, որը պատրաստականություն է հայտնել
տրամադրել ԱՄՆ «Citibank» բանկի կողմից թողարկված բանկային
քարտերի մագնիսական ժապավենների վրա գրառված
տեղեկությունները՝ այսպես կոչված «դամպերը» և PIN-
ծածկագրերը, դրանց օգտագործմամբ բանկային քարտերի կեղծ
կրկնօրինակներ պատրաստելու և «Citibank»-ի ԱՄՆ-ում գործող
բանկոմատներից գումարներ հափշտակելու համար, որպես
մասնաբաժին պահանջելով գողոնի 65 տոկոսը: Նպատակադրվելով
հափշտակություններ իրականացնել ԱՄՆ տարածքում, Միքայել
Թումասյանն այդ առաջարկությամբ դիմել է քարտային
գեղծարարությունների փորձ ունեցող ընկերոջ՝ Ռոբերտ
Շահբազյանի ծանոթին՝ Մեքսիկայի տարածքում բնակվող և Աշոտ

անվամբ հանդես եկող ՀՀ քաղաքացի Միհրան Հովհաննեսի Չանգուլյանին: Վերջինս հավանություն է տվել այդ առաջարկությանը և գողոնի տարբերություն կազմող 35 տոկոսը հավասար կիսելու: պայմանով պատրաստակամություն է հայտնել վերոհիշյալ տեղեկությունները ստանալու դեպքում ԱՄՆ-ում բնակվող ծանոթների միջոցով կազմակերպել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստումը, դրանցով բանկոմատներից գումարների գողանալը և գողոնի 65 տոկոսը Միքայել Թումայանի միջոցով «Loader»-ին փոխանցելու գործընթացը: Հանցավոր առաջարկությունն ընդունելու մասին Միքայել Թումայանը հայտնել է «Loader»-ին, գաղտնապահության և գողոնի հայտնաբերումը դժվարացնելու ու այն իրավապահ մարմինների տեսադաշտից թաքցնելու նկատառումներից ելնելով պայմանավորվել են, որ վերջինիս բաժնեմասը՝ գողոնի 65 տոկոսը փոխանցվելու է «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Ուկրաինայի տարածքում գրանցված 327448922479 նույնացման համարով փոխանակման կետի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին՝ «Ի.Վ. Սաևսկու համար AA-482741 Կիև, պաշտպանիչ ծածկագրով, 5 օրվա ընթացքում» տեքստով ծանոթությամբ:

Նշված հանցավոր մտահղացումն իրագործելու շուրջ ձևավորվել է կայուն կազմակերպված խումբ, որի անդամները տևական ժամանակ՝ 2008 թվականի սեպտեմբերից մինչև նոյեմբեր ամիսը գործել են տարբեր պետությունների՝ Ռուսաստանի Ղաշնուխյան, Մեքսիկայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների տարածքներում, կապ պաշտպանել համացանցի միջոցով: Կազմակերպված խմբի կազմի մեջ մտել են «Loader»-ը, Միքայել Թումայանը, Միհրան Չանգուլյանը, ինչպես նաև վերջինիս կողմից խմբում ներգրավված և ԱՄՆ-ում բնակվող քեմակալը՝ Վարդան Աբդուլյանը, քննությամբ չպարզված ոմն Վահանը և այլոք: Դերաբախշման համաձայն «Loader»-ին վերապահվել է բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ պատրաստելու համար տեղեկությունների, քարտերի կեղծման ընթացքում համապատասխան խորհրդատվություն տրամադրումը, բանկոմատներից կատարվող գողությունների գործընթացի վերահսկումը, ելքագրվող գումարների վրա քարտատերերի կողմից դրված լիմիտների վերացումը, կամ դրանց ավելացումը: Միքայել Թումայանին վերապահվել է «Loader»-ից համացանցի միջոցով ստացված տեղեկությունները քարտերի կեղծման համար Միհրան Չանգուլյանին կամ Վարդան Աբդուլյանին էլեկտրոնային հաղորդագրությունների տեսքով ուղարկելը, գողացված գումարների վերաբերյալ հաշվետվություններ ստանալը, դրանք խմբավորելը և «Loader»-ին ուղարկելը, ինչպես նաև ԱՄՆ-ից ստացված գողոնի 65 տոկոսը պայմանավորված եղանակով վերջինիս փոխանցելը: Միհրան Չանգուլյանին վերապահվել է նրա կողմից խմբի կազմում ներգրավված և ԱՄՆ-ում բնակվող անձանց ընդհանուր ղեկավարումը, իսկ Վարդան Աբդուլյանին և քննությամբ դեռևս չպարզված ոմն Վահանին և այլ անձանց՝ ստացված տեղեկություններով բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստումը, դրանց օգտագործմամբ բանկոմատներից անմիջականորեն գումարի հափշտակումը և գողոնի համապատասխան մասը Միքայել Թումայանին Մոսկվա փոխանցելը:

Նախնական պայմանավորվածության համաձայն Միքայել Թումայանը 2008 թվականի սեպտեմբերից մինչև նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում «Loader»-ից մաս-մաս ստացել է «Citibank»-ի հաշվեհամարների դամպերը և PIN-ծածկագրերը, դրանք էլեկտրոնային հաղորդագրությունների տեսքով ուղարկել Միհրան Չանգուլյանին կամ Վարդան Աբդուլյանին, հարկ եղած դեպքում փոխանցել է «Loader»-ի ցուցումները՝ կապված բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստման կամ դրանց օգտագործմամբ բանկոմատներից գողություններ կատարելու

ժամերի վերաբերյալ՝ վերջինիս կողմից բանկոմատներից էլքագրվող գումարների վրա քարտատերերի կողմից դրված լիմիտները վերացնելու նպատակով: Կազմակերպված խմբի անդամներն այդ տվյալների օգտագործմամբ պատրաստել են վճարային փաստաթղթեր հանդիսացող բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ, ապա «Citibank»-ի և «7-11» ցանցի խանութների բանկոմատներից Ամերիկայի Միացյալ Նահանգների տարածքում 2008 թվականի սեպտեմբերից մինչև նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում կանխիկ փողի տեսքով գողացել են առնվազն 134.178.839 ՀՀ դրամին համարժեք 436.500 ԱՄՆ դոլար առանձնապես խոշոր չափերի գումար:

Հափշտակված գումարների վերաբերյալ Միքայել Թումայանն էլեկտրոնային հաղորդագրությունների տեսքով ստացել է մանրամասն հաշվետվություններ և դրանք նույն եղանակով ուղարկել է «Loader»-ին, որից հետո ԱՄՆ-ում գտնվող կազմակերպված խմբի անդամների կողմից գողոնի զգալի մասը փոխանցվել է Մոսկվայում գտնվող Միքայել Թումայանին: Մասնավորապես, Միհրան Չանգուլյանի ցուցումով Երևանում գտնվող Ռոբերտ Շահբազյանին փոխանցվել է 42.300 ԱՄՆ դոլար, որի մասին Չանգուլյանը Միքայել Թումայանին հայտնել է 19.10.2008թ. ICQ-հաղորդագրությամբ: Ռոբերտ Շահբազյանն էլ, այդ գումարից մուծելով համապատասխան տոկոսներ, 2008 թվականի հոկտեմբերի 21-ին «Յունիբանկ» ՓԲ ընկերության միջոցով Միքայել Թումայանին փոխանցել է 12.845.768 ՀՀ դրամին համարժեք 41.800 ԱՄՆ դոլար, այն ուղարկելով Միքայել Թումայանի և վերջինիս մորաքրոջ որդիների՝ Հրաչյա և Լևոն Շահինյանների տվյալներով: Ստանալով ԱՄՆ-ից ուղարկված գողոնի զգալի մասը, Միքայել Թումայանը, վերցնելով իր բաժինը, դրա 65 տոկոսն ըստ պայմանավորվածության փոխանցել է «Loader»-ին՝ «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Ուկրաինայի տարածքում գրանցված 327448922479 նույնացման համարով փոխանակման կետի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին, դրանով իսկ թաքցնելով գողոնն իրավապահ մարմինների տեսադաշտից և խեղաթյուրելով հանցավոր ճանապարհով ստացված գույքի ծագման աղբյուրը և իրական բնույթը: Ղրա արդյունքում 2008 թվականի սեպտեմբերից մինչև նոյեմբերն ընկած ժամանակահատվածում Միքայել Թումայանի կողմից Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցվել է առնվազն 110.049.141 ՀՀ դրամին համարժեք 359.675 ԱՄՆ դոլար:

Մասնավորապես՝ 2008 թվականի սեպտեմբերի 12-ին Միքայել Թումայանը «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 2.476.318 ՀՀ դրամին համարժեք 8200 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 4040 պաշտպանիչ ծածկագիրը:

2008 թվականի սեպտեմբերի 17-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 4.942.850 ՀՀ դրամին համարժեք 16340 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 808880 պաշտպանիչ ծածկագիրը:

2008 թվականի սեպտեմբերի 20-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 3.249.138 ՀՀ դրամին համարժեք 10725 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 8544 պաշտպանիչ ծածկագիրը:

2008 թվականի սեպտեմբերի 24-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 4.817.227 ՀՀ դրամին

համարժեք 15830 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 8544 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի սեպտեմբերի 25-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 3.063.606 ՀՀ դրամին համարժեք 10075 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 8549 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի սեպտեմբերի 30-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 3.259.874 ՀՀ դրամին համարժեք 10790 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 4040 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 2-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 1.595.352 ՀՀ դրամին համարժեք 5280 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 4040 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 5-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 5.222.620 ՀՀ դրամին համարժեք 17225 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 4040 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 9-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 7.322.523 ՀՀ դրամին համարժեք 23890 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 6060 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 9-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 8.965.417 ՀՀ դրամին համարժեք 29250 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 6060 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 9-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 2.544.033 ՀՀ դրամին համարժեք 8300 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 6060 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 11-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 3.796.019 ՀՀ դրամին համարժեք 12350 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 8080 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 11-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 1.844.220 ՀՀ դրամին համարժեք 6000 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 8080 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 14-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 9.342.286 ՀՀ դրամին համարժեք 30420 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից

ստանալու համար անհրաժեշտ 9090 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 14-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 4.204.335 ՀՀ դրամին համարժեք 13690 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 9090 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 16-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 12.460.433 ՀՀ դրամին համարժեք 40755 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 1818 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 17-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 7.175.844 ՀՀ դրամին համարժեք 23400 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 2020 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 17-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 5.381.883 ՀՀ դրամին համարժեք 17550 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 2020 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 20-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 3.653.430 ՀՀ դրամին համարժեք 11895 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 3343 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 22-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 11.421.160 ՀՀ դրամին համարժեք 37000 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 9191 պաշտպանիչ ծածկագիրը: 2008 թվականի հոկտեմբերի 23-ին նա «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z858390437944 էլեկտրոնային դրամապանակին փոխանցել է 3.310.568 ՀՀ դրամին համարժեք 10710 ԱՄՆ դոլար և հանցակցին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է գումարը փոխանակման կետից ստանալու համար անհրաժեշտ 3232 պաշտպանիչ ծածկագիրը: Այնուհետև, նպատակադրվելով ինքնուրույն զբաղվել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստմամբ, Միքայել Թումայանը, գտնվելով Մոսկվա քաղաքում, ձեռք է բերել դրա համար անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր, այդ թվում սեփական դյուրակիր համակարգչի մեջ ներբեռնել է «exebacommv9.exe» անվանումով ֆայլը՝ նախատեսված բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող, գրառող և վերագրառող սարքերն աշխատացնելու համար, ձեռք է բերել նման սարքավորում՝ «MSRE712H-66» մոդելի, դրա ծրագրային ապահովումը: Բացի դրանից, համացանցային շփումների ընթացքում ծանոթանալով քննությամբ դեռևս չչարգված՝ «47-VC Holo» կեղծանուն օգտագործող անձնավորության հետ և ճշտելով նրա մասնագիտացման ոլորտը, վերջինիս 2009 թվականի հունվարի 19-ին ICQ-հաղորդագրությամբ պատվիրել է պատրաստել «Վիզա» վճարային համակարգի պլաստիկ քարտերի համար նախատեսված 80 հատ կեղծ հոլոգրաֆիկ լոգո-պիտակներ և քարտերի դարձերեսների փակցվող, ստորագրության համար նախատեսված կեղծ շերտեր, իսկ «Մաստեր քարդ» վճարային համակարգի պլաստիկ քարտերի

համար՝ 20-ական կեղծ հոլոգրաֆիկ լոգո-պիտակներ և ստորագրության համար նախատեսված շերտեր: Ըստ համացանցի միջոցով ձեռք բերված պայմանավորվածության Միքայել Թումայանը պատվիրած ապրանքի դիմաց 1290 ԱՄՆ դոլարը 2009 թվականի հունվարի 21-ին փոխանցել է հանցակցի կողմից մատնանշված «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z 231323205521 էլեկտրոնային դրամապանակին, իսկ վերջինս ապրանքն ուղարկել է Միքայել Թումայանի մորաքրոջ՝ Մարա Պողոսյանի տան հասցեով: Ստանալով պատվիրված կեղծ հոլոգրաֆիկ լոգո-պիտակները և ստորագրության համար նախատեսված շերտերը, Միքայել Թումայանն այդ մասին 2009 թվականի հունվարի 25-ին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է վերոհիշյալ հանցակցին և վերջինիցս խորհուրդներ է հարցրել դրանք փակցնելու հետ կապված առաջացած խնդիրների վերաբերյալ: Օգտվելով այդ խորհուրդներից, Միքայել Թումայանը պատրաստել է որպես վճարային փաստաթուղթ օգտագործման համար պիտանի 4002933000152126, 4002933000152167, 4008855000139528, 4008855000139791, 4060990031742100, 4060990031766208, 4868960002004511, 4217639998597062, 4627300029509444, 4868272225737103, 4060955656469578, 5120600008598014, 4868272300901319, 4147340017356169, 4342562006047805, 4868272090689025, 4063156156863298, 4868272206436014, 4021950000187008, 4868272187799703, 4868272206436014, 4339930028900225, 4003447010518472, 5178058381298382, 4003442503080106, 5262251993333617, 5462130025289377, 4147340017356169, 5287501337210017, 4868272090689025, 4313070581987895, 5462130012001587 համարների թվով 32 հատ բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, դրանց մագնիսական ժապավենների վրա որպես քարտատերերի տվյալներ գրառել է Ստանիսլավ Պետրովի, Նիկոլայ Սեվիչևի, Սերգեյ Ջակոբկոյի, Սերգեյ կամովի, Ստանիսլավ Վլասովի և Յան Քինգսոնի տվյալները: Ընդ որում, 4002933000152167, 4008855000139528, 4060990031766208 համարների քարտերի կեղծ կրկնօրինակների դիմերեսին Միքայել Թումայանը դաջել է Ստանիսլավ Անտիպինի տվյալները, իսկ դարձերեսին գետեղել է քննությամբ դեռևս չչարզված հանցակցի լուսանկարը: Միաժամանակ 4002933000152126, 4008855000139791 և 4060990031742100 համարների քարտերի կեղծ կրկնօրինակների դիմերեսին Միքայել Թումայանը դաջել է Գարրի Միխայլովի տվյալները և դրանց դարձերեսի ներքևի մասում գետեղել է իր լուսանկարը: Դրա հետ մեկտեղ Միքայել Թումայանը, գտնվելով ՌԴ Մոսկվա քաղաքում, միջոցներ է ձեռնարկել Գարրի Միխայլովի տվյալներով անձը հաստատող կեղծ վարորդական իրավունք ձեռք բերելու համար, որպեսզի դրանք կարողանա ներկայացնել այդ տվյալներով պատրաստված բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով գործարքներ կատարելիս: Համացանցային շփումների ընթացքում ծանոթանալով քննությամբ դեռևս չչարզված՝ «POCHTA» կեղծանուն օգտագործող անձնավորության հետ և ճշտելով նրա մասնագիտացման ոլորտը, վերջինիս 2009 թվականի հունվարի 22-ին ICQ-հաղորդագրությամբ պատվիրել է իր լուսանկարով, սակայն 02.12.1972թ. ծնված ՌԴ քաղաքացի Գարրի Գարրիի Միխայլովի տվյալներով 77 EK 647037 համարի վարորդական իրավունքի վկայական և դրա համար հանցակցի կողմից մատնանշած համացանցային կայքի հասցեով ուղարկել է իր լուսանկարով ֆայլը: Նախնական պայմանավորվածության համաձայն, Թումայանը պատվիրած ապրանքի դիմաց 1900 ռուսական ռուբլու համարժեք ԱՄՆ դոլարի տեսքով գումարը 2009 թվականի հունվարի 27-ին փոխանցել է հանցակցի մատնանշած «WebMoney Transfer» էլեկտրոնային վճարային համակարգի Z323770091127 էլեկտրոնային դրամապանակին՝ «10710» պաշտպանիչ ծածկագրով, իսկ վերջինս պատրաստած վարորդական կեղծ վկայականը նույն օրը «DHL» փոստային ծառայության միջոցով

ուղարկել է Միքայել Թումայանի մորաքրոջ՝ Մարա Պողոսյանի տան հասցեով և համացանցի միջոցով հայտնել է ծանրոցի 3615439041 հսկիչ համարը: Ստանալով կեղծ փաստաթուղթը, Միքայել Թումայանն այդ մասին 2009 թվականի հունվարի 29-ին ICQ-հաղորդագրությամբ հայտնել է վերոհիշյալ հանցակցին: Իմանալով հանդերձ, որ ընկերը՝ Երևանում բնակվող Ռոբերտ Շահբազյանը մտադիր է մեկնել Արաբական Միացյալ Էմիրություններ, պարտավորվել է այնտեղ հափշտակություններ իրականացնելու համար պատրաստել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ, նույնանման զեղծարարություններով զբոլվող ընդհանուր ընկերոջ՝ Գեորգի Թաթարյանի հետ ICQ-հաղորդագրությունների միջոցով 2009 թվականի փետրվարի 5-ին պայմանավորվել են, որ վերջինս տրամադրի տեղեկությունները՝ «դամպերը», իսկ նա դրանք գրառի քարտերի մագնիսական ժապավենների վրա, իսկ քարտերի մակերեսին դաջի Ռոբերտ Շահբազյանի կողմից տրամադրած տվյալները քարտատերերի մասին: Դրա արդյունքում ԱՄԷ մեկնած Ռոբերտ Շահբազյանը 2009 թվականի փետրվարի 10-ին կալանավորվել է Դուբայում՝ բանկային կեղծ քարտերով գործարքներ կատարելու համար և հետագայում դատապարտվել:

Ի վերջո, 2010 թվականի հուլիսի 9-ին Միքայել Թումայանը Մոսկվայից N 907 չվերթով ժամանել է Երևան, ուղեբեռում տեղափոխելով վերոհիշյալ կեղծ վարորդական վկայականը, բանկային քարտերի թվով 32 հատ վերոհիշյալ կեղծ կրկնօրինակները, ինչպես նաև կեղծ բանկային քարտերի պատրաստման՝ դրանց մագնիսական ժապավենների վրա տեղակություններ գրառելու և վերագրառելու համար անհրաժեշտ սարքավորումը, «Վիզա» և «Մաստեր Քարտ» համակարգերի պլաստիկ քարտերը կեղծելու համար անհրաժեշտ թվով 45 կեղծ հողդորաֆիլ լոգո-պիտակները և քարտերի դարձերեսին փակցվող, ստորագրության համար նախատեսված 23 կեղծ շերտերը, դյուրակիր համակարգիչը և դրա 3 կոշտ սկավառակակիրները, սակայն «Զվարթնոց» օդանավակայանում ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից նրա ուղեբեռի գնման ընթացքում դրանք հայտնաբերվել են:

Միքայել Ռուբենի Թումայանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ 24.06.2011թ. ուղարկվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Ապացույցների հետազոտում և գնահատում.

ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-325-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Միքայել Ռուբենի Թումայանը իրեն մեղավոր ճանաչեց մասնակի՝ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 38-325-րդ հոդվածի 1-ին մասով, հրաժարվեց ցուցմունք տալուց և հայտարարեց այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով իրեն մեղաազրված արարքները ինքը չի կատարել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով իրեն մեղաազրված արարքը չավարտված հանցագործություն է, քանի որ իր կողմից պատրաստված քարտերը վերջնական տեսքի չեն բերվել: Մեղադրական եզրակացությունում նկարագրված այն արարքները, որ իբր ինքը կատարել է համակարգիչով չեն համապատասխանում իրականությանը, քանի որ իր համակարգիչից ազատ կարող էին օգտվել այլ անձինք: Ինչ վերաբերվում է կեղծ բանկային քարտերին, ապա դրանք ինքը ձեռք է բերել համացանցում հայտարարություն տեսնելուց հետո և վճարումը կատարել է էլեկտրոնային կարգով:

Ղատարանը գտնում է, որ Մ. Թումայանի իր անմեղության մասին հայտարարությունները քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակ են հետապնդում:

Նրա կատարած հանցանքները հիմնավորվել է դատաքննությամբ ձեռք բերված հետևյալ ապացույցներով.

Վկա՝ Լիանա Գագիկի Սայադյանի ցուցմունքով այն մասին, որ 1980-ական թվականների վերջերին հանդիպել է Միհրան Չանգուլյանի հետ, վերջինիս ճանաչել է Աշոտ անունով: Նրան բոլորը միշտ այդպես են դիմել, թե ինչու՝ ինքը չի հետաքրքրվել: Աշոտը բնակվել է Երևանի «Ջեյթուն» թաղամասում, նրա տանն երբեք չի եղել, ընտանիքի անդամների հետ չի շփվել, լսել է, որ քույրերի անունները եղել են Անահիտ և Անժելա: 1989 թվականին Աշոտը մեկնել է ԱՄՆ մշտական ​​բնակության, իսկ 2005 թվականին արտաքսվել է Հայաստան և իրենց հարաբերությունները վերսկսվել են: 2005 թվականից մինչև 2007 թվականը իրենք ապրել են միասին, վարձակալել են բնակարան Նոր Նորք համայնքի 5-րդ զանգվածում՝ «Ռադիոտեխնիկա» հանրախոսանութի մոտակայքում: Այնտեղ բնակվել են երկուսով և հիմնական ծախսերը կատարել են իրար հետ: ԱՄՆ-ից Աշոտի արտաքսման պատճառներն իրեն հայտնի չեն եղել, նրա պատմելով ինչ-որ վիճաբանության մեջ է ընկել, մի քանի տարի ժամկետով բանտարկվել է, հետո արտաքսվել է Հայաստան: Իմացել է, որ Աշոտը ԱՄՆ-ում ամուսնացել է Բելլա անունով կնոջ հետ, ունեցել է երկու երեխա՝ Արման և Սյուզի անուններով, բնակվել են Գլենդել քաղաքում: Աշոտը պարբերաբար զնգահարել է կնոջը, խոսել է երեխաների հետ: Քանի որ Աշոտին գրանցվել էր պետք, նա ժամանակավոր հաշվառվել է իր մոր տանը՝ քաղ. Երևան, Բաբաջանյան 39, բն. 601 հասցեով: Ինքն իմացել է Աշոտի Հայաստանից մեկնելու մտադրության վերաբերյալ, քանի որ նա բազմիցս ասել է այդ մասին: Ի վերջո, 2007 թվականի սեպտեմբեր ամսին նա վերջնականորեն մեկնել է Հայաստանից, թե ու՛ք, ինքը չի իմացել: Մինչ այդ նա երկու ամսով մեկնել է Բրազիլիա, թե ու՛ք մոտ, իրեն հայտնի չի եղել, Հայաստանում և արտերկրում գտնվող նրա ընկերներից ինքը ոչ մեկին չի ճանաչել: Հայաստանից մեկնելուց հետո Աշոտը մի քանի անգամ զանգահարել է իրեն, որից հետո զանգերը դադարել են և մինչև այժմ իրեն վերջինիս գտնվելու վայրը հայտնի չէ: Թե ինչու է գբաղվել Աշոտը Երևանում, ինքը չի իմացել, որևիցե ձեռնարկատիրական գործունեություն չի ծավալել, նրա ասելով, գումարը ուղարկել են ծնողները ԱՄՆ-ից:

Վկա՝ Վարդուշ Կոստյայի Պետրոսյանի ցուցմունքներով այն մասին, որ ինքը հանդիսանում է Լիանա Սայադյանի մայրը, միասին բնակվում են Երևան Ավան Բաբաջանյան 38/39 601 602 հասցեում, իրենց հետ միասին ապրում է նաև Լիանայի որդին: Լիանան նախկինում ամուսնացած եղել Անդրանիկ Հակոբյանի հետ, 1997թ. նրանք ամուսնալուծվել են: Վերոհիշյալ հասցեում նշված բնակարանը պատկանում է իրեն և իրենք բոլորով այնտեղ են ապրում: 2005թ. Լիանան իրեն ասել է, որ իրեն գտել է այն տղամարդը ում սիրել է երիտասարդ հասակում և որոշել են ապրել միսին վարձով: Այդ տղամարդու՝ Աշոտի մասին ինքը լսել էր Լիանայից պատանեկության տարիներին, Լիանան իրեն ասել էր, որ հանդիպում է Աշոտ անունով մի երիտասարդի հետ, որը պետք է ընտանիքով մեկնեն ԱՄՆ մշտական ​​բնակության: Լսելով այդ մասին ինքը արգելել է Լիանային հանդիպել այդ երիտասարդի հետ, սակայն այդ Աշոտին այդպես էլ չէր տեսել: Երբ Լիանան ասել էր, որ Աշոտը վերադարձել է ԱՄՆ-ից և որոշել են վարձով ապրել, չի առարկել: Ինքը մեկ- մեկ այցելել է նրանց, նրանք էլ մեկ-մեկ եկել են իր տուն: Աշոտի մասին հիմնականում իմացել է Լիանայից, նա է իրեն պատմել, որ Աշոտը Ամերիկայում կռվի մեջ է ընկել, դատվել է երկու տարի, որից հետո արտաքսել են Երևան: Ինքը իմացել է, որ Աշոտը ԱՄՆ-ում ունեցել է ընտանիք, կին և երկու երեխա: Որոշ ժամանակ անց Լիանայի խնդրանքով ինքը Աշոտին ժամանակավոր գրանցել է իր բնակարանում և այդ ընթացքում է իմացել, որ նրա անունը Միհրան Չանգուլյան է: 2007թ. Աշոտը մեկնել է Հայաստանից և

մեկնելուց առաջ ասել է, քանի որ ԱՄՆ մեկնել չի կարող կմեկնի Բրազիլիա ընտանիքի հետ միասին բնակվելու համար:

Վկա՝ Արթուր Շմավոնի Դիլանյանի ցուցմունքով այն մասին, որ երկար տարիներ օգտվել է 091429859 հեռախոսահամարից, շրջապատում իրեն շատերը դիմել են «բրատ» մականունով:

Միքայել Թունասյանի հետ ինքը ծանոթացել է ընկերոջ՝ Ռոբերտ Շահբազյանի միջոցով: Իր իմանալով Միքայելը բնակվել է Մոսկվա քաղաքում, թե ինչո՞ւ է զբաղվել, ինքը չի հետաքրքրվել, հաճախակի չեն հանդիպել: Գեորգի Թաթարյանի հետ ծանոթացել են 2001 թվականին, ընկերացել են, տվյալ պահին վերջինս բնակվում է Կանադայում և համացանցով ICQ-հաղորդագրություններով շփվելուց վերջինիս օգտագործել է «Շաման» կեղծանունը:

Մոտ 4 տարի առաջ Ռոբերտ Շահբազյանի միջոցով 2006 թվականին ծանոթացել է վերջինիս ընկերոջ՝ Աշոտի հետ, Ռոբերտը խնդրել է իրեն ծանոթին ավտոմեքենայով տանել «Զվարթնոց» օդանավակայան: Այդ ծանոթին վերցրել են Նոր-Նորք համայնքից, Ռոբերտը իր ծանոթին ներկայացրել է Աշոտ անունով, վերջինիս ոտքը կոտրված է եղել: Աշոտին տարել են օդանավակայան, նա այնտեղ հանդիպել է ինչ-որ մի անձնավորության հետ, որին ինքը չի տեսել, դրանից հետո նրան տուն են տարել: Աշոտի հետ Երևանում հանդիպել է մի քանի անգամ, վերջինս հանդիպման է եկել Ռոբերտի հետ: Խոսակցության ընթացքում իմացել է, որ Աշոտի ընտանիքը իմացել է ԱՄՆ Գլենդել քաղաքում, իսկ նրան արտաքսել են ինչ-որ խմբակային կատարված խոշոր չափերի խարդախության համար: Իր իմանալով, Աշոտը նույնիսկ ազատագրկման հետ կապված պատիժ է կրել ԱՄՆ-ում: Իմանալով, որ ինքը ունի Կանադայում կացության կարգավիճակ, Աշոտը հետաքրքրվել է, թե ինչպե՞ս է կարելի մեկնել Կանադա կամ ԱՄՆ՝ ընտանիքի հետ միավորվելու նպատակով, ինքը հայտնել է վերջինիս հետաքրքրող տեղեկությունները: Ռոբերտից իմացել են, որ Աշոտը մեծ հեղինակություն է վայելել Գլենդել քաղաքում և այնտեղ հայտնի է եղել Մայքլ անունով, իմացել է նաև ազգանունը, որը տարիների ընթացքում մոռացել է: «Գուզլ» համացանցային ծրագրով բազմաթիվ հոդվածներ է կարդացել Աշոտի մասին, որ նա ինչ-որ խմբի կազմում պետությունից խոշոր գումար է կորզել տարիներ առաջ, մանրամասնությունները իր հիշողության մեջ չեն տպավորվել: Իր իմանալով, ժամանակ անց Աշոտը նորից մեկնել է ԱՄՆ և Ռոբերտի խոսքերից, այնտեղ նորից կալանավորվել է, թե ինչպե՞ս է մեկնել ԱՄՆ՝ ինքը չի հետաքրքրվել: ԱՄՆ մեկնելուց հետո Աշոտի հետ հեռախոսագրույցներ չի ունեցել և վերջինս նրան որևիցե խնդրնքներով չի դիմել:

Վկա՝ Ռոլանդ Սերյոժայի Հակոբյանի ցուցմունքով այն մասին, որ երկար տարիներ ընկերություն է արել հարևանությամբ բնակվող և իր նման որպես կոշկակար աշխատող Լևոն Ասոյանի հետ, ծանոթ է եղել նաև վերջինս կնոջ՝ Անժելա Չանգուլյանի հետ: Մի քանի տարի առաջ ծանոթացել է Լևոն Ասոյանի աներորդու հետ, որը ներկայացել է Աշոտ անունով: Ծանոթանալուց վերջինս ասել է, որ արտաքսվել է ԱՄՆ-ից, դրա պատճառներով ինքը չի հետաքրքրվել: Աշոտի ասելով, նրա կինը և երեխաները մնացել են ԱՄՆ Գլենդել քաղաքում: Իր իմանալով, Աշոտը ընտանիքով մեկնել էր ԱՄՆ դեռ 1980-ական թվականների վերջերին՝ Լևոնի բանակից վերադառնալուց և Անժելայի հետ ամուսնանալուց հետո: Մի քանի ամիս շփվել են Աշոտի հետ և մտերմացել, մի քանի անգամ վերջինս իրենց տուն է եկել: Իր իմանալով, Աշոտն Երևանում ոչ մի գործով չի զբաղվել, հիմնականում համակարգչի մոտ է ժամանակն անցկացրել: Աշոտի ընկերների հետ ինքը չի շփվել, մի անգամ միասին գնացել են Ծաղկաձոր, որտեղ այդ ժամանակ հանգստացել է Լևոն Ասոյան ընտանիքի հետ: Աշոտը Հայաստանում մնացել է մոտ երկու տարի և հետո մեկնել է արտասահման, այդ պահից ինքը նրա հետ կապ չի ունեցել, իր իմանալով, վերջինս գտնվել է Մեքսիկայում: Այն մասին, որ Աշոտի իսկական անունը Միհրան է, ինքը չի իմացել, Անժելան և Լևոն Ասոյանը նրան միշտ դիմել են Աշոտ

անունով: Իրեն է պատկանել 091-370630 հեռախոսահամարը և եղել են դեպքեր, երբ Լևոնը վերցրել է իր հեռախոսահամարը և առանձնանալով, դրանով զրույցել է ինչ-որ անծանց հետ, իսկ բջջային հեռախոսը վերադարձնելուց բաժանորդի հեռախոսահամարը ջնջել է:

Վկա՝ Լևոն Կարենի Շահինյանի նախաքննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ 1995 թվականից մոր՝ Մարսելիա Պողոսյանի հետ բնակություն են հաստատել ՌԴ Մոսկվա քաղաքում, վարձակալել են բնակարան քաղ. Մոսկվա, Ժիվոպիսնայա փողոց, 5-րդ մասնաշենք. բն. 42 հասցեով: Իրենց մորաքրոջ որդին՝ Միքայել Ռուբենի Թումայանը 2007 թվականից նույնպես տեղափոխվել է բնակվելու Մոսկվա, սկզբից կնոջ՝ Արմինե Ամրոյանի հետ մի տարուց ավել բնակվել է իրենց տանը, հետո այլ բնակարան են վարձակալել: Որոշ ժամանակ անց Արմինեն վերադարձել է Երևան, իսկ Միքայելը մնացել է Մոսկվայում, թե կոնկրետ ինչո՞ւ է զբաղվել, իրենք չեն հետաքրքրվել: Իրենք ծանոթացել է նաև Միքայելի ընկերոջ՝ Ռոբերտ Շահբազյանի հետ, ընկերացել են, սակայն իրենց միջև երբեք գործնական հարաբերություններ չեն եղել: Մի անգամ՝ 2008 թվականին նա Միքայել Թումայանի համար իրենց անունով փոխանցել է խոշոր գումարներ, իրենք այդ գումարների հետ ոչ մի կապ չեն ունեցել և այդ փոխանցման վերաբերյալ Ռոբերտի հետ չեն պայմանավորվել: Միքայելն է բացատրել, որ խոշոր գումար հնարավոր չէ փոխանցել մեկ անձի անունով, խնդրել է իրենց թույլատվությունը, որպեսզի այդ գումարի մի մասը ձևակերպվի իրենց անուններով: Չունենալով որևիցե կասկածանք, իրենք համաձայնվել են, հետո ինքը, եղբայրը և Մ. Թումայանը գնացել են «Յունիստրիմ» բանկ և ստացել են գումարները: Իրենք ստացած գումարները միանգամից հանձնել են Միքայելին և այլև չեն հետաքրքրվել, թե ի՞նչ է նա արել այդ գումարների հետ: Թե այդ գումարը ի՞նչ ծագում է ունեցել և ի՞նչ հարաբերություններ են եղել Ռոբերտ Շահբազյանի և Միքայելի միջև, իրենց չի հետաքրքրել, այլևս իրենց անուններով այդպիսի փոխանցումներ չեն եղել: /հ. 9 գ.թ. 127-134/

Վկա՝ Հրաչյա Կարենի Շահինյանի նախաքննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ 1995 թվականից մոր՝ Մարսելիա Պողոսյանի հետ բնակություն են հաստատել ՌԴ Մոսկվա քաղաքում, վարձակալել են բնակարան քաղ. Մոսկվա, Ժիվոպիսնայա փողոց, 5-րդ մասնաշենք. բն. 42 հասցեով: Իրենց մորաքրոջ որդին՝ Միքայել Ռուբենի Թումայանը 2007 թվականից նույնպես տեղափոխվել է բնակվելու Մոսկվա, սկզբից կնոջ՝ Արմինե Ամրոյանի հետ մի տարուց ավել բնակվել է իրենց տանը, հետո այլ բնակարան են վարձակալել: Որոշ ժամանակ անց Արմինեն վերադարձել է Երևան, իսկ Միքայելը մնացել է Մոսկվայում, թե կոնկրետ ինչո՞ւ է զբաղվել, իրենք չեն հետաքրքրվել: Իրենք ծանոթացել է նաև Միքայելի ընկերոջ՝ Ռոբերտ Շահբազյանի հետ, ընկերացել են, սակայն իրենց միջև երբեք գործնական հարաբերություններ չեն եղել: Մի անգամ՝ 2008 թվականին նա Միքայել Թումայանի համար իրենց անունով փոխանցել է խոշոր գումարներ, իրենք այդ գումարների հետ ոչ մի կապ չեն ունեցել և այդ փոխանցման վերաբերյալ Ռոբերտի հետ չեն պայմանավորվել: Միքայելն է բացատրել, որ խոշոր գումար հնարավոր չէ փոխանցել մեկ անձի անունով, խնդրել է իրենց թույլատվությունը, որպեսզի այդ գումարի մի մասը ձևակերպվի իրենց անուններով: Չունենալով որևիցե կասկածանք, իրենք համաձայնվել են, հետո ինքը, Լ. Շահինյանը և Մ. Թումայանը գնացել են «Յունիստրիմ» բանկ և ստացել են գումարները: Իրենք ստացած գումարները միանգամից հանձնել են Միքայելին և այլև չեն հետաքրքրվել, թե ի՞նչ է նա արել այդ գումարների հետ: Թե այդ գումարը ի՞նչ ծագում է ունեցել և ի՞նչ հարաբերություններ են եղել Ռոբերտ Շահբազյանի և Միքայելի միջև, իրենց չի հետաքրքրել, այլևս իրենց անուններով այդպիսի փոխանցումներ չեն եղել: Այն մասին, որ Միքայելը զբաղվել է բանկային կեղծ քարտերի հետ կապված զեղծարարություններով, իրենց ոչինչ հայտնի չի եղել, այդ

մասին իմացել են միայն Երևանում վերջինիս ձերբակալությունից հետո: Համացանցով դիտելով վերջինիս ձերբակալման վերաբերյալ նյութը և տեսնելով առգրավված բանկային քարտերը, նկատել են, որ դրանցից երկուսը իրեն են պատկանել: Դրանք ժամկետանց և անվավեր են եղել, սակայն դրանք իրենք Միքայելին չեն տվել: /հ. 9 գ.թ. 114-122/

Մ.Թումասյանին մեղսագրված հանցանքները հիմնավորվել են հետևյալ իրողություններով՝ Միքայել Թումասյանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված «SONY WAI0» տեսակի, PSG-6Q1L մոդելի դյուրակիր համակարգչով, պարունակող ինչպես Միքայել Թումասյանի և նրա հանցակիցների միջև համացանցային նամակագրությամբ ֆայլեր, այնպես էլ բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստման համար անհրաժեշտ ֆայլեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում «Exeba-COMM 9.0» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Program Files\Escan\Exeba-COMM 9.0» ուղեցույցով պանակում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումասյանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված «MSRE712H-66» մոդելի սարքավորմամբ, նախատեսված է մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդալու և գրառելու համար:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումասյանի ուղեբեռում հայտնաբերված «GQ», «GREAT QUALITY», «MSRE SOFT» գրառումներով լազերային սկավառակով, որի մեջ գետեղված «LKE712 program» պանակում առկա է «MSRE712» ծրագրային ապահովումը, նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:/ հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումասյանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված «Western Digital» ֆիրմայի արտադրության «WD800BEVE-11UYTO» մոդելի WXH507041087 սերիական համարով համակարգչային կոշտ սկավառակով, պարունակող ինչպես Միքայել Թումասյանի և նրա հանցակիցների միջև համացանցային նամակագրությամբ ֆայլեր, այնպես էլ բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստման համար անհրաժեշտ «Exeba-COMM 9.0» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Program Files\Escan\Exeba-COMM 9.0» ուղեցույցով պանակում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումասյանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված «VAIO» գրառումով կադապարի մեջ տեղադրված «HITACHI» մակնիշի, «SJK7365H» գործարանային համարով կոշտ սկավառակով, պարունակող բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստման համար անհրաժեշտ ֆայլեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝

-բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների տվյալները և դրանց միջոցով գողացված գումարների և գողոնի բաշխման վերաբերյալ հաշվետվությունները, գետեղված

«Arka\txt\Partition1\Something\Work Place\D+P» ուղեցույցով «D+P» պանակի ֆայլերում:

-«Partition1\Something\ME AND LYOV» ուղեցույցով «напорт-1» անվանումով ֆայլում գետեղված թվային լուսանկարը, որը նույնական է 4002933000152167, 4008855000139528, 4060990031766208 համարների քարտերի կրկնօրինակների

դարձերեսի վրա առկա Միքայել Թումասյանի քննությանը դեռևս չպարզված հանցակցի լուսանկարների հետ, այսինքն օգտագործվել է այդ քարտերի պատրաստման ժամանակ:

-«Exeba-COMM 9.0» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Something\ME AND LYOV\Soft\Exeba 9.0» և «Partition1\Something\Work Place\D+P\Exeba 9.0» ուղեցույցով պանակներում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:

-«CC2Bank 1.3» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Something\ME AND LYOV\CC2Bank 1.3», «Partition1\Something\Security Worm\Program Files\CC2Bank 1.3» և «Partition1\Something\Security Worm\Soft\cc2bank13\CC2Bank 1.3» ուղեցույցներով պանակներում և նախատեսված ըստ բանկային քարտի համարի թողարկող բանկը պարզելու համար:

-«MSR106 Utility Program» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Something\ME AND LYOV\Soft\CC Reader» և «Partition1\Something\Work Place\D+P\CC Reader» ուղեցույցով պանակներում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:

-«MSRE712» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Something\ME AND LYOV\Soft\LKE712 program» և «Partition1\Something\Work Place\D+P\LKE712 program» ուղեցույցով պանակներում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:

-«206DAX21.exe» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Something\ME AND LYOV\Soft\MSR206\MSR206\Demo AP» և «Partition1\Something\Work Place\D+P\MSR206\MSR206\Demo AP» ուղեցույցով պանակներում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:

-«PlasticCarderKit» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Something\ME AND LYOV\Soft\PlasticCarderKit\PlasticCarderKit» և «Partition1\Something\Work Place\D+P\PlasticCarderKit\PlasticCarderKit» ուղեցույցով պանակներում և նախատեսված «MasterCard», «VISA» և «Amex» տեսակի բանկային քարտերի մագնիսական ժապավենի «track2»-ից «track1»-ը գեներացնելու համար:

-«Mars Banks Base» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Something\Security Worm\Program Files\Mars Banks Base» ուղեցույցով պանակում, որն իրենից ներկայացնում է բանկերի մասին տվյալների շտեմարան:

-«CC2Bank ListGenerator» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Something\Security Worm\Soft\CC2Bank ListGenerator 1.0» և «Partition1\» ուղեցույցով պանակներում և նախատեսված տեքստային ֆայլերում բանկային քարտերի համարների որոնման և ըստ հայտնաբերված համարների՝ քարտը թողարկող բանկի մասին տեղեկություններ ստանալու համար:

-«Track2 generator» ծրագրային ապահովումը, գետեղված «Partition1\Something\Security Worm\Soft\Track2» ուղեցույցով պանակում և նախատեսված ըստ գործածողի կողմից մուտքագրված տվյալների բանկային քարտերի մագնիսական ժապավենի «track1»-ի և «track2»-ի գեներացման համար: /հատոր 9, գ. թ. 248-250, հատոր 10, գ. թ. 174/

Միքայել Թումայանի ուղեբեռից 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և որպես վճարային փաստաթուղթ օգտագործման համար պիտանի 4868960002004511, 4217639998597062, 4627300029509444, 4868272225737103, 4060955656469578, 5120600008598014, 4868272300901319, 4147340017356169, 4342562006047805, 4868272090689025, 4063156156863298, 4868272206436014, 4021950000187008, 4868272187799703, 4868272206436014, 4339930028900225, 4003447010518472, 5178058381298382, 4003442503080106, 5262251993333617, 5462130025289377, 4147340017356169, 5287501337210017, 4868272090689025, 4313070581987895, 5462130012001587

համարների բանկային քարտերի թվով 26 հատ կեղծ կրկնօրինակներով:/հատոր 2, գ. թ. 81-88, հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռից 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և որպես վճարային փաստաթուղթ օգտագործման համար պիտանի 4002933000152167, 4008855000139528, 4060990031766208 համարների թվով 3 հատ քարտերի կեղծ կրկնօրինակներով՝ դիմերեսին Ստանիսլավ Անտիպինի տվյալներով, իսկ դարձերեսին՝ Միքայել Թումայանի քննությամբ դեռևս չպարզված հանցակցի լուսանկարով:/հատոր 2, գ. թ. 83, հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռից 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և որպես վճարային փաստաթուղթ օգտագործման համար պիտանի 4002933000152126, 4008855000139791 և 4060990031742100 համարների թվով 3 հատ քարտերի կեղծ կրկնօրինակներով՝ դիմերեսին Գարրի Միխայլովի տվյալներով, իսկ դարձերեսին՝ Միքայել Թումայանի լուսանկարով /հատոր 2, գ. թ. 83, 91, հատոր 9, գ. թ. 248-250/

«ТDК» ֆիրմայի արտադրության լազերային սկավառակով, որի մեջ զետեղված «IMG_0847.JPG» անվանումով ֆայլում թվային լուսանկարը նույնական է 4002933000152126, 4008855000139791 և 4060990031742100 համարների քարտերի կրկնօրինակների դարձերեսի վրա առկա լուսանկարի, ինչպես նաև Գարրի Գարրի Միխայլովի տվյալներով 77EK647037 համարի վարորդական իրավունքի վկայականի վրա առկա լուսանկարների հետ, այսինքն օգտագործվել է դրանց պատրաստման ժամանակ:/հատոր 2, գ. թ. 89, հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և բանկային քարտերի կեղծման համար նախատեսված 2 հատ պլաստիկները՝ «կՐՈՉՈՑ ըՐՈՎՍ»ի լոգոտիպներով և Միքայել Թումայանի լուսանկարներով, առանց մակերեսին և մագնիսական ժապավենի վրա կատարված գրառումների:/հատոր 2, գ. թ. 88, հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և բանկային քարտերի կեղծման համար նախատեսված 7 հատ պլաստիկները՝ «Citibank»-ի լոգոտիպներով, առանց մակերեսին և մագնիսական ժապավենի վրա կատարված գրառումների:/հատոր 2, գ. թ. 87, 91, հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և բանկային քարտի կեղծման համար նախատեսված 1 պլաստիկը՝ «ՀցրրՍՈռ հՑՈՎՊՈՐՑ» բանկի լոգոտիպով, առանց մակերեսին և մագնիսական ժապավենի վրա կատարված գրառումների:/հատոր 2, գ. թ. 88, հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված «Visa» վճարային համակարգի բանկային քարտերի համար նախատեսված 34 հատ հոլոգրաֆիկ կեղծ լոգո-պիտակներով:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված «Master Card» վճարային համակարգի բանկային քարտերի համար նախատեսված 11 հատ հոլոգրաֆիկ կեղծ լոգո-պիտակներով:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. գննմամբ հայտնաբերված «Visa» վճարային համակարգի բանկային քարտերի դարձերեսին փակցվող, ստորագրության համար նախատեսված 15 հատ կեղծ շերտերով:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. գննմամբ հայտնաբերված «Master Card» վճարային համակարգի բանկային քարտերի դարձերեսին փակցվող, ստորագրության համար նախատեսված 15 հատ կեղծ շերտերով:/հատոր 9, գ. թ. 248-250/

Ռոբերտ Շահբազյանի անունից «Յունիբանկ» ՓԲ ընկերություն 4.607.100 դրամին համարժեք 15000 ԱՄՆ դոլարի կանխիկ մուծման համար 21.10.2008թ. կտրոնով և նշված գումարը Միքայել Թումայանին փոխանցելու համար 21.10.2008թ. դիմումով:/հատոր 9, գ. թ. 79-81, 248-250/

Ռոբերտ Շահբազյանի անունից 21.10.2008թ. «Յունիբանկ» ՓԲ ընկերություն 4.607.100 դրամին համարժեք 15000 ԱՄՆ դոլարի կանխիկ մուծման համար կտրոնով և նշված գումարը Լևոն Շահինյանին փոխանցելու համար 21.10.2008թ. դիմումով:/հատոր 9, գ. թ. 82-84, 248-250/

Ռոբերտ Շահբազյանի անունից 21.10.2008թ. «Յունիբանկ» ՓԲ ընկերություն 3.631.568 դրամին համարժեք 11800 ԱՄՆ դոլարի կանխիկ մուծման համար կտրոնով և նշված գումարը Հրաչյա Շահինյանին փոխանցելու համար 21.10.2008թ. դիմումով:/հատոր 9, գ. թ. 85-87, 248-250/

Ռոբերտ Շահբազյանի անունից 21.10.2008թ. «Յունիբանկ» ՓԲ ընկերություն 141222 դրամի կանխիկ մուծման համար կտրոններով:/հատոր 9, գ. թ. 88-90, 248-250/

ՌԴ քաղաքացի Գարրի Գարրի Միխայլովի տվյալներով 77EK647037 համարի վարորդական իրավունքի վկայականով:/հատոր 2, գ. թ. 90, հատոր 9, գ. թ. 248-250/

Ի վերջո, 2010 թվականի հուլիսի 9-ին Միքայել Թումասյանը Մոսկվայից N 907 չվերթով ժամանել է Երևան, ուղեբեռում տեղափոխելով վերոհիշյալ կեղծ վարորդական վկայականը, բանկային քարտերի թվով 32 հատ վերոհիշյալ կեղծ կրկնօրինակները, ինչպես նաև կեղծ բանկային քարտերի պատրաստման` դրանց մագնիսական ժապավենների վրա տեղակայություններ գրառելու և վերագրառելու համար անհրաժեշտ սարքավորումը, <<Վիզա>> և <<Մաստեր Քարտ>> համակարգերի պլաստիկ քարտերը կեղծելու համար անհրաժեշտ թվով 45 կեղծ հոլոգրաֆիկ լոգո-պիտակները և քարտերի դարձերեսին փակցվող, ստորագրության համար նախատեսված 23 կեղծ շերտերը, դյուրակիր համակարգիչը և դրա 3 կոշտ սկավառակակիրները, սակայն <<Զվարթնոց>> օդանավակայանում << ԱՄԾ աշխատակիցների կողմից նրա ուղեբեռի գնման ընթացքում դրանք հայտնաբերվել են:

Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.
Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

13. Ամբաստանյալ Մ.Թումասյանի պաշտպաններ Ս.Շարբաթյանն և Մ.Թորոսյանն իրենց բերած վերաքննիչ բողոքում նշում են, որ քրեական գործի երեք ստվարածավալ հատորներում գոյություն չունեն << քրեական դատավարության օրենսդրության սկզբունքների պահանջներին համապատասխանող գեթ մեկական ապացույց, որոնք հիմք հանդիսանային նշված երկու հանցակազմերով առաջադրված մեղադրանքների համար:

Իրենց պաշտպանյալին << քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով` այն է ըստ նախաքննական մարմնի կողմից ներկայացված մեղադրանքի, որ իբր պաշտպանյալիս մասնակցությամբ ԱՄՆ-ի քաղաքացիներին պատկանող վճարային քարտերից, դրանց կեղծ կրկնօրինակների միջոցով գողացվել է շուրջ 134.178.839 << դրամին համարժեք 436.500 ԱՄՆ դոլլար գողության համար մեղադրանք առաջադրել հնարավոր չէ այն պարզ պատճառով, որ աշխարհի ցանկացած երկրում, այդ թվում նույնիսկ ԱՄՆ-ում չի կարող գողության, որպես ուրիշի գույքի գաղտնի հափշտակության դեպք գոյություն ունենալ, եթե չկա ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի սեփականության օրենքով պաշտպանվող շահերին նյութական վնաս պատճառված լինի գաղտնի կերպով հափշտակության միջոցով:

Այսինքն, տվյալ դեպքում բացառվում է հանցագործության դեպքի գոյությունը, քանի որ հանցավոր, հակաօրինական, քրեորեն հետապնդելի համարվող արարքի ձևավորման համար պարտադիր անհրաժեշտ 4 բաղադրամասերից մեկը` հանցագործության օբյեկտը, որին ուղղված պետք է լինի սուբյեկտիվ կողմի ուղղակի դիտավորությամբ կատարվող հափշտակությունը, բացակայում է, իսկ ավելի պարզ ասած, տուժող գոյություն չունի:

Իսկ եթե տուժող գոյություն չունի և գողության հանցադեպը բացակայում է, ուրեմն պաշտպանյալի որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ, ինչպես նաև դատախազի մեղադրական ճառում և բնականաբար դատարանի կողմից արձակված մեղադրող դատավճռում նշված այն ամենն, ինչը որ վերաբերվում է իբր գողացված գումարները հանցավոր խմբի անդամների միջև` 65 %-ը ոմն <<Լոադերի>>, իսկ մնացած 35%-ն իրենց պաշտպանյալի և նրա մյուս հանցակիցների միջև բաժանելու հանգամանքին, ընդամենը նախաքննական մարմնի կողմից լույ ենթադրությունների հիման վրա նշված և անհասկանալի կերպով պետական մեղադրողի հանիրավի աջակցության արժանացած, իրականությանը չհամապատասխանող շարադրանք է, որի մասին ըստ պաշտպանական կողմի խորին համոզման հետագա խոսակցություններն ինքստինքյան ավելորդ են դառնում:

Ինչ վերաբերվում է << քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքին, ապա այդ

հանցակազմն ընդհանրապես բացակայում է, քանի որ օրենսդիրը հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացում, լեգալացում /փողերի լվացում/ ասելով նկատի ունի հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարները ֆինանսական գործողությունների, այլ գործարքների ոլորտներում, արտադրական ձեռնարկատիրական, կամ այլ տնտեսական գործունեության բնագավառներում, նոր ստեղծվող ձեռնարկությունների կանոնադրական ֆոնդերում, կամ բարեգործական ֆոնդերում ներդնելը:

Այս պարագայում նախ պաշտպանյալը գումարներ, արժեքներ չի հափշտակել, որպեսզի դրանք լվալու անհրաժեշտություն առաջանար և երկրորդը, եթե հափշտակած էլ լիներ, ներկա վիճակով նրա գործողություններում բացակայում է նման հանցակազմը:

Նշված երկու հոդվածներով առաջադրված մեղադրանքները բացառապես հիմնված են իրենց պաշտպանյալից օդանավակայանում վերցված համակարգչից և կոշտ սկավառակից քաղված տեղեկությունների վրա: Տեղեկություններ, որոնք առանց ստուգվելու և հիմնավորվելու դրվել են ապացույցների հիմքում: Հիմնավորելով իրենց ասածը իրավաբանական տեսանկյունից մեղադրական եզրակացությունում այնուհետև, մեղադրական ձառում և վերջապես դատավճռում, ինչպես նկարագրական, այնպես էլ պաշտպանյալի մեղադրանքի մասում նշվել է, որ իբր ԱՄՆ-ի քաղաքացիներին պատկանող վճարային քարտերից, դրանց կեղծ կրկնօրինակների միջոցով, գողացել է շուրջ 134.178.839 ՀՀ դրամին համարժեք 436.500 ԱՄՆ դոլար: Որից հետո նախաքննական մարմնի և դատարանի կողմից իրենց հանդամամբ այդ ամբողջ գումարը բաժանվել է հանցավոր խմբի անդամների միջև, 65%-ը ինչ որ Լոադերի, իսկ 35%-ը իրենց պաշտպանյալի և մյուս հանցակիցների միջև:

Այս ամենը հիմնված է համակարգչից և կոշտ սկավառակից հանված չճշտված տեղեկությունների վրա:

Գործով չի պարզվել, թե այդ մասնաբաժանումները կատարվել են թե ոչ, դրանք որոշվել են զուտ քննիչի ենթադրությունների վրա: Այսպես, նշվում է, որ 41.800 ԱՄՆ դոլար այդ գումարից Երևան քաղաքում կանխիկկացվել է և Ռոբերտ Շահբազյանի միջոցով փոխանցվել է Մոսկվա քաղաք իրենց պաշտպանյալի և նրա մորաքրոջ երկու տղաների անվամբ:

Այդ առնչությամբ հարցաքննվել է Ռոբերտ Շահբազյանը, որը հիմնավորապես հերքել է այդ գումարի հանցավոր ծագում ունենալու հանգամանքը և նշել որ դա իր անձնական գումարն է եղել, որը <<Յունի բանկ>>-ի միջոցով փոխանցվել է Մոսկվա:

Նախաքննությունը չի կարողացել հիմնավորել, որ դա հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումար է, չի պարզել այդ գումարի ծագման աղբյուրը, առավել ևս Ռ.Շահբազյանն իր ցուցմունքներում նշել է, որ դա իր անձնական գումարն է, իր բիզնեսի համար է փոխանցել Մոսկվա և քանի որ <<Յունի բանկ>>-ը 20.000 ԱՄՆ դոլարից ավել միանվագ փոխանցում չի կատարում, ուստի 41.800 ԱՄՆ դոլարն այդ երեք անձանց անվամբ է փոխանցվել: Այլ ապացույց չզտնելով հանդերձ նախաքննության մարմինն այդ դրվագը ներառել է իրենց պաշտպանյալին առաջադրված մեղադրանքի ծավալում:

Գումարի առաջացման աղբյուրը քննիչը չի պարզել, նա չի պարզել, թե ԱՄՆ-ից հանցավոր խմբի անդամներից որևէ մեկի կողմից նման գումար փոխանցվել է ՀՀ թե ոչ, որի պատճառով էլ չի հիմնավորվել այդ գումարի իրական ծագման աղբյուրը:

Քննիչը պարզապես հեշտ միջոց ընտրելով, իր ենթադրությամբ համարել է, որ այդ գումարը հանցավոր ճանապարհով ձեռք բերած գումարի մի մասն է, կանխիկկացման ձևով:

Եթե ընդունեն, որ այդ գումարի 65 տոկոսը պաշտպանյալը պետք է փոխանցեր Լոադերին, որը կազմում է 270.170 ԱՄՆ դոլար, ապա այս դեպքում նման չափի որևէ գումարային փոխանցում չի երևում ոչ

մի տեղ, անգամ համակարգչից և կոշտ սկավառակից քաղված տեղեկություններում:

Մյուս փոխանցումները դարձյալ համակարգչի և կոշտ սկավառակի տեղեկություններով, իբր փոխանցվել են Ուկրաինայի հանրապետություն կամ Լոադերին և այլուր:

Նախաքննության մարմինը և մեղադրող կողմը դարձյալ, ինչպես նաև դատարանը, անհիմն ենթադրությունների վրա այդ ամենը ներկայացրել են իբր գողացված փողերի լվացում:

Նախ այդ ամբողջ տեղեկությունները փոխանցումների մասին միայն սին և չստուգված տեղեկություններ են, չկան դրանց բանկային փոխանցումների հիմնավորումները և փաստորեն չի ապացուցվել, թե ընդհանրապես նման փոխանցումներ տեղի ունեցել են, թե դրանք պարզապես անհիմն խոսակցություններ են:

Սի պահ ընդունենք, որ իրոք եղել են այդ փոխանցումները, և որ քրեական գործի մեջ առկա են այդ փոխանցումների բանկային փաստաթղթերը:

Այնուամենայնիվ նախաքննությունը պետք է պարզեր, որ այդ գումարները ունեն հանցավոր ծագում, մասնավորապես իբր ԱՄՆ-ի քաղաքացիների քարտերից կատարված գողության գումարն է:

Պաշտպանյալն աշխատելով և բնակվելով ՌԴ-ում զբաղվել է մանր կամ միջին բիզնեսով, որի ընթացքում ենթադրվում է նաև առաքված և ստացված դրամական փոխանցումներ այս կամ այն կողմ:

Յուրաքանչյուր ֆինանսական գործարք նախաքննության մարմինն իր ենթադրություններով վերագրել է նշված գողությամբ հափշտակված գումարների լվացմանը:

Զկա այդ գումարների փոխանցումները հիմնավորող բանկային որևէ փաստաթուղթ:

Պարզված չէ, թե իրականում նման բանկային փոխանցումներ կատարվել են թե ոչ, եթե անգամ եղել են, բիզնեսի համա՞ր են նախատեսված եղել, թե՞ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարներ են եղել:

Ամեն ինչը կառուցված է միայն ենթադրությունների վրա:

Անընդհատ հայտարարում են, որ գողությունը կատարվել է ԱՄՆ-ի քաղաքացիներին պատկանող քարտերից, իսկ գործով առկա չէ գեթ մեկ տուժող, այսինքն քրեական գործով ընդհանրապես չի ապացուցվել պաշտպանյալիս կողմից նման հանցանք կատարվելու փաստ:

Իսկ միայն գրությունները և դրանց պատասխանները դնել ապացույցների շարքում անհիմն է, քանի դեռ չկա այդ քարտերի սեփականատերերի ցուցմունքները, որ իրականում իրենց քարտերից գողություն է տեղի ունեցել և, որ իրենք այդ գողության հետևանքով հանդիսանում են տուժողներ ու քաղաքացիական հայց են ներկայացնում կոնկրետ իրենց պատճառված վնասի չափով:

Նախաքննական մարմինն իր տարբեր հարցումներին կոնկրետ որևէ ապացուցողական պատասխան չստանալով, այդ որևէ արժեք չներկայացնող թղթերը ներկայացրել է դատարան, որն էլ դրա և դրա նման այլ թղթերի հիման վրա պաշտպանյալիս թեթև ձեռքով դատապարտել է ազատազրկման 8 տարի ժամկետով:

Այսպես՝ նախաքննական մարմնի կողմից կատարված հարցմանը ԱՄՆ-ի գլխավոր դատախազի օգնականը պատասխանել է՝ «Լիթվ Ռոքի տարածքային ստորաբաժանումը կշարունակի աշխատել ԱՄՕ կողմից ներկայացված հարցերի շուրջ: Դժբախտաբար Մ.Թումայանի համակարգչում տեղակայված տարբեր բանկային քարտի հաշվեհամարների վերաբերյալ տվյալները համապատասխան բանկերի պատասխանից են կախված: Հենց այդ տվյալները հավաքվեն, այն հնարավորինս շուտ կտրամադրվի ԱՄՕ-ին:

Լիթվ Ռոքի ստորաբաժանումը չի կարող բացահայտել «Սիթի Բանկ»-ի ներկայացրած աղյուսակի քարտատերերին ժամանակի սահմանափակ լինելու պատճառով և այն, որ «Սիթի Բանկ»-ը հանդիսանում է՝ գլխավոր տուժողը, դա չի կարող իրականացվել միջնորդության համաձայն»:

Հակասություններ կան նաև կոշտ սկավառակում փոխանցված գումարների վերաբերյալ, քանի որ քարտերից գողացված փոխանցումների թիվը շատ ավելի քիչ է, քան կոշտ սկավառակում երևացող գումարի թիվը:

Միսալ է որակված նաև իրենց պաշտպանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը:

Այս արարքում որևէ հիմնավորում չկա, որ իրենց պաշտպանյալն այդ գործողությունը կատարել է հանցավոր խմբի անդամների հետ, իսկ օդանավակայանում ձերբակալվելով, նա իր հանցավոր մտադրությունը, այդ քարտերը ավարտուն տեսքի բերելու և իրացնելու համար, պարզապես իր ավարտին չի կարողացել հասցնել իր կամքից անկախ պատճառներով, այսինքն հանցագործությունը կանխվել է նախապատրաստման փուլում: Ուստի, բողոք բերած անձինք գտնում են, որ այն պետք է վերադարձվի ՀՀ քրեական օրենսգրքի 35-203-րդ հոդվածի 1-ին մասով:

Սույն գործով բացակայում է քաղաքացիական հայցի որևէ պահանջ, պետությանը չի հասցվել որևէ վնաս, մեղադրող կողմը դատական ծախս չներկայացրեց, քրեական գործով էլ չի ապացուցվել, որ իր պաշտպանյալը, որևէ շահ է ստացել իրեն մեղսագրվող արարքների արդյունքում, ուստի բողոք բերած անձինք խնդրում են սույն հանգամանքը հաշվի առնել որոշում ընդունելիս:

Քրեական գործով անցնում են թվով 6 վկաներ, որոնցից երկուսը, պաշտպանյալի մորաքրոջ տղաները՝ Լևոն և Հրաչյա Շահինյանները, որոնք ցուցմունքներ են տվել Ռոբերտ Շահբազյանի կողմից փոխանցված գումարների վերաբերյալ, մյուս 4 վկաների ցուցմունքներով քննիչը պարզապես փորձել է պարզել, թե Աշոտը նույն Միհրան Չանգուրյանն է թե, ոչ և վերջինս արդյոք Հայաստան եկել է թե, ոչ, կամ երբ:

Միայն այսքանը և այդ ցուցմունքներում ապացուցողական որևէ հանգամանք չկա, 1.Exaba.com սովորական ծրագրի մասին է խոսքը: Այդպիսի ծրագրեր առկա են բազմաթիվ այլ կայքերում, և որևէ առնչություն չունի իրենց պաշտպանյալին առաջադրված մեղադրանքներից որևէ մեկի հետ:

2. Պաշտպանյալին ուղեբեռում հայտնաբերված msr E712 մոդելի սարքավորումն ազատ վաճառքի ենթակա իր է, և իր պաշտպանյալը չի ժխտում որ դա բերելով իր հետ, մտածել է օգտագործել մոտը հայտնաբերված քարտերը վերջնական և ավարտուն տեսքի բերելու համար, սակայն չի հասցրել, որովհետև ձերբակալվել է օդանավակայանում, իսկ նախկինում այն չի օգտագործել: Իսկ մյուս իրեղեն ապացույցը՝ գրառող սարքը, ընդամենը վերը նշված msr E712 մոդելի սարքավորման բաղկացուցիչ մասն է կազմում:

3. Հաջորդը նույնպես սովորական ծրագիր է, որը կարող է լինել բազմաթիվ այլ կայքերում և դարձյալ որևէ առնչություն չունի քրեական գործի հետ:

4. Հաջորդ հերթական իրեղեն ապացույցն իրենց պաշտպանյալի համակարգչի մի մասն է կազմում, որից կարող է ձեռք բերել ցանկացած անձ և այդպիսիք առկա են Ինտերնետի կայքերում: Այդ սարքն իր մեջ ինֆորմացիա է պարունակել այն մասին, թե պաշտպանյալն իր մոտ հայտնաբերված քարտերը ավարտուն տեսքի բերելու համար ինչ աշխատանքներ պետք է կատարեր և հենց դա վկայում է, որ նա չի տիրապետել քարտերի պատրաստման ամբողջ գործընթացին, և նախկինում էլ նման գործողությամբ չի զբաղվել, այլապես կտիրապետեր քարտերը պատրաստելու և ավարտուն տեսքի բերելու ամբողջ գործընթացին, և իր մոտ նման սկավառակ պահելու անհրաժեշտություն չէր ունենա:

5. Այնուհետև թվով 10 հատ տարբեր ծրագրերի անվանումներ են, որոնք դարձյալ կարող են առկա լինել ինտերնետ կայքերում: Դրանք ևս դատարկ ծրագրեր են, իրենց մեջ որևէ տեղեկություն չեն պարունակում:

6. Հաջորդը՝ հերթականությամբ, միմյանց հաջորդող այն քարտերն են, որոնք օդանավակայանում հայտնաբերվել և «<վերցվել>> են պաշտպանյալի ուղեբեռից:

7. Հաջորդը Ռոբերտ Շահբազյանի կողմից «<Յունիբանկ>> ՓԲԸ-ով 41800 ԱՄՆ դոլարի փոխանցումն է:

Դրա մի մասը փոխանցվել է պաշտպանյալիս մորաքրոջ երկու տղաներին, Մոսկվայում բնակվող Հրաչյա և Լևոն Շահինյանների անունով, որը հետո հանձնվել է նույն Ռոբերտ Շահբազյանին, ինչ-որ բիզնեսի մեջ օգտագործելու համար: Իսկ թե քննիչն ինչ հիմքով և ինչ տրամաբանությամբ է այն ընդգրկել որպես ապացույց, անհասկանալի է:

Քրեական գործով որևէ փաստարկ, որ այդ գումարը հնարավոր է կապ ունենա որևէ հանցավոր գործունեության հետ գոյություն չունի: Հակառակ դեպքում դրա համար քրեական պատասխանատվության կենթարկվելու նաև Ռոբերտ Շահբազյանը, այդ գումարը փոխանցողը, այնինչ նա բազմիցս հարցաքննվել է քննիչի կողմից ու ազատ արձակվել:

8. Մյուսը վարորդական իրավունքի կեղծ վկայականն է, որում պաշտպանյալն իրեն մեղավոր է ճանաչել: Ինչպես նկատեցին իրեղեն ապացույցներից առաջադրված մեղադրանքների հետ կապ ունեն միայն հայտնաբերված քարտերը, վարորդական իրավունքի վկայականը և msr E712 մոդելի սարքավորումը:

9. Առաջինը վերաբերում է Վրաստանում գտնվող ԱՄՆ հետաքննությունների բյուրոյի ներկայացուցչությունից տրված գրությանը, որտեղ թվարկված են ԱՄՆ «<Սիթի>> բանկի և 7-11 խանութների ցանցի բանկոմատներում բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով կատարված գործարքների ցանկը: Այդ ներկայացուցչությունը պարզապես պատասխանել է նախաքննության մարմնի հարցմանը, որով վերջինս ինչպես այլ երկրների տարբեր ծառայություններից, այնպես էլ այդ ներկայացուցչությունից խնդրել է գրության մեջ նշված քարտերի վերաբերյալ որևէ տեղեկություն հաղորդել: Իր գրություններում նախաքննության մարմինը հստակ նշել է այդ քարտերի համարները և ներկայացուցչությունը դրանք արտագրելու իր գրության մեջ ուղարկել է որևէ լրացուցիչ տեղեկություն չտրամադրելով, թե ով է դրանք կատարել, ինչ պայմաններում և ինչ հանգամանքներում:

10. Հաջորդը, որպես այլ փաստաթուղթ, քննիչը ներկայացրել է նույն այդ քարտերի համարները, որոնք դուրս են հանվել համակարգից: Մոսկվա քաղաքում գտնվելու ընթացքում իրենց պաշտպանյալը վարձակալությամբ բնակվել է տարբեր հասցեներում, որտեղ նրա հետ բնակվել են գործով չպարզված այլ անձինք, համակարգիչը փակի տակ չի եղել, դրված է եղել տան մեջ և բացի դա այն շարժական գույք է և ով ցանկանար ազատ կերպով կարող էր օգտվել ու իրականում էլ օգտվել են: Թե կոնկրետ ով է օգտվել ու ինչի համար, նախաքննությունը չի պարզել, բացի դա, այն, ինչ քննիչը հայտնաբերել է համակարգի մեջ, նույնը ազատ կերպով յուրաքանչյուր ոք կարող էր վերցնել համացանցից, այդպիսի բազմաթիվ տվյալներ առկա են համացանցում:

11. Հաջորդը վերաբերվում է համակարգչում առկա կցկտուր ինչ-որ խոսակցությունների տեքստերին՝ LOADER ծածկանվամբ ինչ-որ մեկի և Աշոտի հետ, և որ այդ խոսակցությունները արվել են Սիկա ծածկանվամբ անձի կողմից, թե կոնկրետ այդ խոսակցություններից որ մասն է կատարվել իրենց պաշտպանյալի կողմից որ մասը ոչ, նախաքննության մարմինը դարձյալ չի հստակեցրել և հնարավոր էլ չի նույնականացնել կամ հիմնավորել, որ այս կամ այն մասը կատարվել է իրենց պաշտպանյալի կողմից: Եթե ընդունեն անգամ, դրանք կատարվել են իրենց պաշտպանյալի կողմից, ապա ինչ հիմքով է քննիչն իրեն իրավունք վերապահել առանց դատարանի համապատասխան թույլտվության կտրել իր պաշտպանյալին պատկանող կայքը, որը ունենալը կրում է օրինական բնույթ, պաշտպանվում է օրենքով: Այդ գործողությամբ խախտվել է «< քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի պահանջը,

խախտվել է նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածի պահանջը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի պահանջը ... հանրահայտ է, որ արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

12. Հաջորդը թվով 4 ապացույցներն են, որոնք վերաբերվում են դարձյալ ICQ հաղորդագրություններից հանված այն դրվագին, որտեղ մասնավորապես նշվում է, ըստ հաղորդագրությունների Ռոբերտի կողմից ԱՄՆ տանելու համար կեղծ բանկային քարտերը պատրաստել է Միքայել Թումայանը, դրանց մակերեսին տպագրել է Ռոբերտի նշված տվյալները: Այդ առնչությամբ Ռոբերտ Շահբազյանը և նրա ընկեր Հայկ Բիշարյանը հարցաքննվել են քննիչի կողմից, որոնք իրենց ցուցմունքներով հերքել են պաշտպանյալի առնչությունը այդ դեպքի հետ, իսկ այդ ուղղությամբ քննիչը այլ ապացույց ձեռք չի բերել:

13. Հաջորդը՝ մի քանի ապացույցների մեջ քննիչը հիմնավորել է, որ Միհրան Չանգույանը ժամանել է Երևան և մեկնել, կամ, որ նա ամուսնացել է Բելլա Կոչոյանի հետ և որ իր պաշտպանյալի բջջային հեռախոսի բաժանորդների գրքույկում գրանցված է Բելլա Կոչոյանի հեռախոսահամարը: Պաշտպանյալը նախաքննության ընթացքում չի հերքել Բելլա Կոչոյանի հետ հեռախոսագրույց ունենալու փաստը և որ նրանից 100 ԱՄՆ դոլլար գումար է խնդրել և մերժում չի ստացել: Սրանցով քննիչը պարզապես փորձել է հիմնավորել, որ Աշոտը նույն Միհրան Չանգույանն է: Իր պաշտպանյալը չի հերքում, որ նա կարող է հենց Միհրան Չանգույանը հանդիսանալ, սակայն դա դեռևս չի նշանակում, որ արտերկրում Միհրան Չանգույանի կատարած արարքների համար իր պաշտպանյալը պետք է պատասխան տա:

14. Հաջորդ ապացույցը լուսանկարով անձին ճանաչման արձանագրություններն են, որի նպատակը Միհրան Չանգույանի ինքնությունը պարզելն է:

15. Ըստ հերթականությամբ մյուս ապացույցը իր պաշտպանյալի կողմից բուժսարքավորումների ստացումն է ԱՄՆ-ից, որով դարձյալ նախաքննական մարմինը փորձել է հիմնավորել, որ Աշոտը նույն ինքը Միհրան Չանգույանն է:

16. Քրեական գործի համար որպես ապացույց է հանդիսացել փորձագետի եզրակացությունը, որտեղ փորձագետը միայն 3 հատ քարտերով է եզրակացրել 9444, 4511 և 7062 համարները, որ դրանք պիտանի են որպես վճարման միջոցներ օգտագործելու համար, սակայն այդ քարտերն էլ պատկանում են պաշտպանյալի մորաքրոջ տղաներին և ընկերոջը, որոնք էլ ժամկետ անցած քարտեր են:

17. Եզրակացության մեջ մյուս քարտերի վերաբերյալ փորձագետը չի նշում դրանք պիտանի են օգտագործման համար, թե ոչ, նկարագրում է միայն դրանց պատրաստման հնարավոր եղանակները:

Քրեական գործում պաշտպանյալի մեղքը ծանրացնող հանգամանքներ չկան, իսկ որպես մեղմացնող հանգամանք է հանդիսանում այն, որ նա նախկինում դատված չի եղել շրջապատի կողմից բնութագրվում է դրականորեն, հանդիսանում է իր մոր և մորաքրոջ միակ խնամակալը, քրեական գործով քաղաքացիական հայց չկա:

14. Ելնելով վերը շարադրվածից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածով, բողոք բերած անձինք միջնորդում են մասնակիորեն բեկանել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատարանի 23.12.2011թ.

ԵԱՆԴ/0071/01/11 կայացրած դատավճիռը՝

ա/ Միքայել Թումայանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, առաջադրված մեղադրանքներում ճանաչել անմեղ և դրանցով նրա նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ, բ/ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերադրակել ՀՀ քրեական օրենսգրքի

35-203 հողվածի 1-ին մասով:
զ/ ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը գույքի բռնագրավման մասով բեկանել դրա հիմքերի բացակայության պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով առաջին ատյանի դատարանի դատավճիռը, հանգում է այն հետևության, որ այն բավարարելու, իսկ դատավճիռը բեկանելու կամ փոփոխելու հիմքեր չկան՝ հետևյալ պատճառաբանությամբ:

I. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով արդարացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերադրակելու մասով.

16. Վերաքննիչ դատարանը, վերլուծելով և գնահատելով քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված առաջին ատյանի դատարանի դատաքննությամբ հետազոտված ապացույցները հանգում է այն հետևության, որ վերաքննիչ բողոքի պատճառաբանությունները հիմնավորված չեն, իսկ ամբաստանյալ Մ.Թումայանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 203-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը հաստատված է հետևյալ ապացույցներով:

Վկա Լիանա Գազիկի Սայադյանի ցուցմունքով այն մասին, որ 1980-ական թվականների վերջերին հանդիպել է Միհրան Չանգուլյանի հետ, վերջինիս ճանաչել է Աշոտ անունով: Նրան բոլորը միշտ այդպես են դիմել, թե ինչու՝ ինքը չի հետաքրքրվել: Աշոտը բնակվել է Երևանի <<Զեյթուն>> թաղամասում, նրա տանն երբեք չի եղել, ընտանիքի անդամների հետ չի շփվել, լսել է, որ քույրերի անունները եղել են Անահիտ և Անժելա: 1989 թվականին Աշոտը մեկնել է ԱՄՆ մշտական բնակության, իսկ 2005 թվականին արտաքսվել է Հայաստան և իրենց հարաբերությունները վերսկսվել են: 2005 թվականից մինչև 2007 թվականը իրենք ապրել են միասին, վարձակալել են բնակարան Նոր Նորք համայնքի 5-րդ զանգվածում՝ <<Ռադիոտեխնիկա>> հանրախանութի մոտակայքում: Այնտեղ բնակվել են երկուսով և հիմնական ծախսերը կատարել են իրար հետ: ԱՄՆ-ից Աշոտի արտաքսման պատճառներն իրեն հայտնի չեն եղել, նրա պատմելով ինչ-որ վիճաբանության մեջ է ընկել, մի քանի տարի ժամկետով բանտարկվել է, հետո արտաքսվել է Հայաստան: Իմացել է, որ Աշոտը ԱՄՆ-ում ամուսնացել է Բելլա անունով կնոջ հետ, ունեցել է երկու երեխա՝ Արման և Սյուզի անուններով, բնակվել են Գլենդել թաղաքում: Աշոտը պարբերաբար գնալիս եղել է կնոջը, խոսել է երեխաների հետ: Քանի որ Աշոտին գրանցվել էր պետք, նա ժամանակավոր հաշվառվել է իր մոր տանը՝ քաղ. Երևան, Բաբաջանյան 39, բն. 601 հասցեով: Ինքն իմացել է Աշոտի Հայաստանից մեկնելու մտադրության վերաբերյալ, քանի որ նա բազմիցս ասել է այդ մասին: Ի վերջո, 2007 թվականի սեպտեմբեր ամսին նա վերջնականորեն մեկնել է Հայաստանից, թե ու՞ր, ինքը չի իմացել: Մինչ այդ նա երկու ամսով մեկնել է Բրազիլիա, թե ու՞մ մոտ, իրեն հայտնի չի եղել, Հայաստանում և արտերկրում գտնվող նրա ընկերներից ինքը ոչ մեկին չի ճանաչել: Հայաստանից մեկնելուց հետո Աշոտը մի քանի անգամ գանգախաբել է իրեն, որից հետո գանգերը դադարել են և մինչև այժմ իրեն վերջինիս գտնվելու վայրը հայտնի չէ: Թե ինչո՞վ է զբաղվել Աշոտը Երևանում, ինքը չի իմացել, որևիցե ձեռնարկատիրական գործունեություն չի ծավալել, նրա ասելով, գումարը ուղարկել են ծնողները ԱՄՆ-ից:

Վկա Վարդուշ Կոստյայի Պետրոսյանի ցուցմունքներով այն մասին, որ ինքը հանդիսանում է Լիանա Սայադյանի մայրը, միասին բնակվում են Երևան Ավան Բաբաջանյան 38/39 601 602 հասցեում,

իրենց հետ միասին ապրում է նաև Լիանայի որդին: Լիանան նախկինում ամուսնացած եղել Անդրանիկ Հակոբյանի հետ, 1997թ. նրանք ամուսնալուծվել են: Վերոհիշյալ հասցեում նշված բնակարանը պատկանում է իրեն և իրենք բոլորով այնտեղ են ապրում: 2005թ. Լիանան իրեն ասել է, որ իրեն գտել է այն տղամարդը ում սիրել է երիտասարդ հասակում և որոշել են ապրել միսին վարձով: Այդ տղամարդու՝ Աշոտի մասին ինքը լսել էր Լիանայից պատանեկության տարիներին, Լիանան իրեն ասել էր, որ հանդիպում է Աշոտ անունով մի երիտասարդի հետ, որը պետք է ընտանիքով մեկնել ԱՄՆ մշտական բնակության: Լսելով այդ մասին ինքը արգելել է Լիանային հանդիպել այդ երիտասարդի հետ, սակայն այդ Աշոտին այդպես էլ չէր տեսել: Երբ Լիանան ասել էր, որ Աշոտը վերադարձել է ԱՄՆ-ից և որոշել են վարձով ապրել, չի առարկել: Ինքը մեկ- մեկ այցելել է նրանց, նրանք էլ մեկ-մեկ եկել են իր տուն: Աշոտի մասին հիմնականում իմացել է Լիանայից, նա է իրեն պատմել, որ Աշոտը Ամերիկայում կռվի մեջ է ընկել, դատվել է երկու տարի, որից հետո արտաքսել են Երևան: Ինքը իմացել է, որ Աշոտը ԱՄՆ-ում ունեցել է ընտանիք, կին և երկու երեխա: Որոշ ժամանակ անց Լիանայի խնդրանքով ինքը Աշոտին ժամանակավոր գրանցել է իր բնակարանում և այդ ընթացքում է իմացել, որ նրա անունը Միհրան Չանգուլյան է: 2007թ. Աշոտը մեկնել է Հայաստանից և մեկնելուց առաջ ասել է, քանի որ ԱՄՆ մեկնել չի կարող կմեկնի Բրազիլիա ընտանիքի հետ միասին բնակվելու համար: Վկա Արթուր Շնավոնի Դիլանյանի ցուցմունքով այն մասին, որ երկար տարիներ օգտվել է 091429859 հեռախոսահամարից, շրջապատում իրեն շատերը դիմել են <<բրատ>> մականունով: Միքայել Թումայանի հետ ինքը ծանոթացել է ընկերոջ՝ Ռոբերտ Շահբազյանի միջոցով: Իր իմանալով Միքայելը բնակվել է Մոսկվա քաղաքում, թե ինչո՞վ է զբաղվել, ինքը չի հետաքրքրվել, հաճախակի չեն հանդիպել: Գեորգի Թաթարյանի հետ ծանոթացել են 2001 թվականին, ընկերացել են, տվյալ պահին վերջինս բնակվում է Կանադայում և համացանցով ICQ-հաղորդագրություններով շփվելուց վերջինիս օգտագործել է <<Շաման>> կեղծանունը: Մոտ 4 տարի առաջ Ռոբերտ Շահբազյանի միջոցով 2006 թվականին ծանոթացել է վերջինիս ընկերոջ՝ Աշոտի հետ, Ռոբերտը խնդրել է իրեն ծանոթին ավտոմեքենայով տանել <<Ջվարթնոց>> օդանավակայան: Այդ ծանոթին վերցրել են Նոր-Նորք համայնքից, Ռոբերտը իր ծանոթին ներկայացրել է Աշոտ անունով, վերջինիս ոտքը կոտրված է եղել: Աշոտին տարել են օդանավակայան, նա այնտեղ հանդիպել է ինչ-որ մի անձնավորության հետ, որին ինքը չի տեսել, դրանից հետո նրան տուն են տարել: Աշոտի հետ Երևանում հանդիպել է մի քանի անգամ, վերջինս հանդիպման է եկել Ռոբերտի հետ: Խոսակցության ընթացքում իմացել է, որ Աշոտի ընտանիքը իմացել է ԱՄՆ Գլենդել քաղաքում, իսկ նրան արտաքսել են ինչ-որ խմբակային կատարված խոշոր չափերի խարդախության համար: Իր իմանալով, Աշոտը նույնիսկ ազատագրկման հետ կապված պատիժ է կրել ԱՄՆ-ում: Իմանալով, որ ինքը ունի Կանադայում կացության կարգավիճակ, Աշոտը հետաքրքրվել է, թե ինչպե՞ս է կարելի մեկնել Կանադա կամ ԱՄՆ՝ ընտանիքի հետ միավորվելու նպատակով, ինքը հայտնել է վերջինիս հետաքրքրող տեղեկությունները: Ռոբերտից իմացել են, որ Աշոտը մեծ հեղինակություն է վայելել Գլենդել քաղաքում և այնտեղ հայտնի է եղել Մայքլ անունով, իմացել է նաև ազգանունը, որը տարիների ընթացքում մոռացել է: <<Գուզլ>> համացանցային ծրագրով բազմաթիվ հոդվածներ է կարդացել Աշոտի մասին, որ նա ինչ-որ խմբի կազմում պետությունից խոշոր գումար է կորզել տարիներ առաջ, մանրամասնությունները իր հիշողության մեջ չեն տպավորվել: Իր իմանալով, ժամանակ անց Աշոտը նորից մեկնել է ԱՄՆ և Ռոբերտի խոսքերից, այնտեղ նորից կալանավորվել է, թե ինչպե՞ս է մեկնել ԱՄՆ՝ ինքը չի հետաքրքրվել: ԱՄՆ մեկնելուց հետո Աշոտի հետ հեռախոսագրույցներ չի ունեցել և վերջինս նրան որևիցե խնդրներով չի դիմել:

Վկա Ռուանդ Սերյոժայի Հակոբյանի ցուցմունքով այն մասին, որ երկար տարիներ ընկերություն է արել հարևանությամբ բնակվող և իր նման որպես կոշկակար աշխատող Լևոն Ասոյանի հետ, ծանոթ է եղել նաև վերջինս կնոջ՝ Անժելա Չանգուլյանի հետ: Մի քանի տարի առաջ ծանոթացել է Լևոն Ասոյանի աներորդու հետ, որը ներկայացել է Աշոտ անունով: Ծանոթանալուց վերջինս ասել է, որ արտաքսվել է ԱՄՆ-ից, դրա պատճառներով ինքը չի հետաքրքրվել: Աշոտի ասելով, նրա կինը և երեխաները մնացել են ԱՄՆ Գլենդել քաղաքում: Իր իմանալով, Աշոտը ընտանիքով մեկնել էր ԱՄՆ դեռ 1980-ական թվականների վերջերին՝ Լևոնի բանակից վերադառնալուց և Անժելայի հետ ամուսնանալուց հետո: Մի քանի ամիս շփվել են Աշոտի հետ և մտերմացել, մի քանի անգամ վերջինս իրենց տուն է եկել: Իր իմանալով, Աշոտն Երևանում ոչ մի գործով չի զբաղվել, հիմնականում համակարգչի մոտ է ժամանակն անցկացրել: Աշոտի ընկերների հետ ինքը չի շփվել, մի անգամ միասին գնացել են Ծաղկածոր, որտեղ այդ ժամանակ հանգստացել է Լևոն Ասոյանն ընտանիքի հետ: Աշոտը Հայաստանում մնացել է մոտ երկու տարի և հետո մեկնել է արտասահման, այդ պահից ինքը նրա հետ կապ չի ունեցել, իր իմանալով, վերջինս գտնվել է Մեքսիկայում: Այն մասին, որ Աշոտի իսկական անունը Միհրան է, ինքը չի իմացել, Անժելան և Լևոն Ասոյանը նրան միշտ դիմել են Աշոտ անունով: Իրեն է պատկանել 091-370630 հեռախոսահամարը և եղել են դեպքեր, երբ Լևոնը վերցրել է իր հեռախոսահամարը և առանձնանալով, դրանով զրույցել է ինչ-որ անծանց հետ, իսկ բջջային հեռախոսը վերադարձնելուց բաժանորդի հեռախոսահամարը ջնջել է:

Վկա Լևոն Կարենի Շահինյանի նախաքննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ 1995 թվականից մոր՝ Մարսելիա Պողոսյանի հետ բնակություն են հաստատել ՌԴ Մոսկվա քաղաքում, վարձակալել են բնակարան քաղ. Մոսկվա, Ժիվոպիսնայա փողոց, 5-րդ մասնաշենք. բն. 42 հասցեով: Իրենց մորաքրոջ որդին՝ Միքայել Ռուբենի Թումայանը 2007 թվականից նույնպես տեղափոխվել է բնակվելու Մոսկվա, սկզբից կնոջ՝ Արմինե Ամրոյանի հետ մի տարուց ավել բնակվել է իրենց տանը, հետո այլ բնակարան են վարձակալել: Որոշ ժամանակ անց Արմինեն վերադարձել է Երևան, իսկ Միքայելը մնացել է Մոսկվայում, թե կոնկրետ ինչո՞վ է զբաղվել, իրենք չեն հետաքրքրվել: Իրենք ծանոթացել է նաև Միքայելի ընկերոջ՝ Ռոբերտ Շահբազյանի հետ, ընկերացել են, սակայն իրենց միջև երբեք գործնական հարաբերություններ չեն եղել: Մի անգամ՝ 2008 թվականին նա Միքայել Թումայանի համար իրենց անունով փոխանցել է խոշոր գումարներ, իրենք այդ գումարների հետ ոչ մի կապ չեն ունեցել և այդ փոխանցման վերաբերյալ Ռոբերտի հետ չեն պայմանավորվել: Միքայելն է բացատրել, որ խոշոր գումար հնարավոր չէ փոխանցել մեկ անձի անունով, խնդրել է իրենց թույլատվությունը, որպեսզի այդ գումարի մի մասը ձևակերպվի իրենց անուններով: Չունենալով որևիցե կասկածանք, իրենք համաձայնվել են, հետո ինքը, եղբայրը և Ս. Թումայանը գնացել են <<Յունիստրիմ>> բանկ և ստացել են գումարները: Իրենք ստացած գումարները միանգամից հանձնել են Միքայելին և այլևս չեն հետաքրքրվել, թե ի՞նչ է նա արել այդ գումարների հետ: Թե այդ գումարը ի՞նչ ծագում է ունեցել և ի՞նչ հարաբերություններ են եղել Ռոբերտ Շահբազյանի և Միքայելի միջև, իրենք չի հետաքրքրել, այլևս իրենց անուններով այդպիսի փոխանցումներ չեն եղել: /հ. 9 գ.թ. 127-134/

Վկա Հրաչյա Կարենի Շահինյանի նախաքննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ 1995 թվականից մոր՝ Մարսելիա Պողոսյանի հետ բնակություն են հաստատել ՌԴ Մոսկվա քաղաքում, վարձակալել են բնակարան քաղ. Մոսկվա, Ժիվոպիսնայա փողոց, 5-րդ մասնաշենք. բն. 42 հասցեով: Իրենց մորաքրոջ որդին՝ Միքայել Ռուբենի Թումայանը 2007 թվականից նույնպես տեղափոխվել է բնակվելու Մոսկվա, սկզբից կնոջ՝ Արմինե Ամրոյանի հետ մի տարուց ավել բնակվել է իրենց տանը, հետո այլ բնակարան են վարձակալել:

Որոշ ժամանակ անց Արմինեն վերադարձել է Երևան, իսկ Միքայելը մնացել է Մոսկվայում, թե կոնկրետ ինչո՞վ է զբաղվել, իրենք չեն հետաքրքրվել: Իրենք ծանոթացել է նաև Միքայելի ընկերոջ՝ Ռոբերտ Շահբաջյանի հետ, ընկերացել են, սակայն իրենց միջև երբեք գործնական հարաբերություններ չեն եղել: Մի անգամ՝ 2008 թվականին նա Միքայել Թումայանի համար իրենց անունով փոխանցել է խոշոր գումարներ, իրենք այդ գումարների հետ ոչ մի կապ չեն ունեցել և այդ փոխանցման վերաբերյալ Ռոբերտի հետ չեն պայմանավորվել: Միքայելն է բացատրել, որ խոշոր գումար հնարավոր չէ փոխանցել մեկ անձի անունով, խնդրել է իրենց թույլատվությունը, որպեսզի այդ գումարի մի մասը ձևակերպվի իրենց անուններով: Չունենալով որևիցե կասկածանք, իրենք համաձայնվել են, հետո ինքը, Լ. Շահինյանը և Մ. Թումայանը գնացել են <<Յունիստրիմ>> բանկ և ստացել են գումարները: Իրենք ստացած գումարները միանգամից հանձնել են Միքայելին և այլևս չեն հետաքրքրվել, թե ի՞նչ է նա արել այդ գումարների հետ: Թե այդ գումարը ի՞նչ ծագում է ունեցել և ի՞նչ հարաբերություններ են եղել Ռոբերտ Շահբաջյանի և Միքայելի միջև, իրենց չի հետաքրքրել, այլևս իրենց անուններով այդպիսի փոխանցումներ չեն եղել: Այն մասին, որ Միքայելը զբաղվել է բանկային կեղծ քարտերի հետ կապված զեղծարարություններով, իրենց ոչինչ հայտնի չի եղել, այդ մասին իմացել են միայն Երևանում վերջինիս ծերբակալությունից հետո: Համացանցով դիտելով վերջինիս ծերբակալման վերաբերյալ նյութը և տեսնելով առգրավված բանկային քարտերը, նկատել են, որ դրանցից երկուսը իրեն են պատկանել: Դրանք ժամկետանց և անվավեր են եղել, սակայն դրանք իրենք Միքայելին չեն տվել: /h. 9 գ.թ. 114-122/

Մ.Թումայանին մեղսագրված հանցանքները հիմնավորվել են հետևյալ իրեղեն ապացույցներով՝ Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. գնմամբ հայտնաբերված <<SONY WAI0>> տեսակի, PSG-6Q1L մոդելի դյուրակիր համակարգչով, պարունակող ինչպես Միքայել Թումայանի և նրա հանցակիցների միջև համացանցային նամակագրությամբ ֆայլեր, այնպես էլ բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստման համար անհրաժեշտ ֆայլեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում <<Exeba-COMM 9.0>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Program Files\Escan\Exeba-COMM 9.0>> ուղեցույցով պանակում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. գնմամբ հայտնաբերված <<MSRE712H-66>> մոդելի սարքավորմամբ, նախատեսված է մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդալու և գրառելու համար:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում հայտնաբերված <<GQ>>, <<GREAT QUALITY>>, <<MSRE SOFT>> գրառումներով լազերային սկավառակով, որի մեջ գետեղված <<LKE712 program>> պանակում առկա է <<MSRE712>> ծրագրային ապահովումը, նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:/ հատոր 9, գ. թ. 248-250/ Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. գնմամբ հայտնաբերված <<Western Digital>> ֆիրմայի արտադրության <<WD800BEVE-11UYTO>> մոդելի WXH507041087 սերիական համարով համակարգչային կոշտ սկավառակով, պարունակող ինչպես Միքայել Թումայանի և նրա հանցակիցների միջև համացանցային նամակագրությամբ ֆայլեր, այնպես էլ բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստման համար

անհրաժեշտ <<Exeba-COMM 9.0>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Program Files\Escan\Exeba-COMM 9.0>> ուղեցույցով պանակում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:/հատոր 9, գ. թ. 248-250/ Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. գնմամբ հայտնաբերված <<VAIO>> գրառումով կադապարի մեջ տեղադրված <<HITACHI>> մակնիշի, <<SJK7365H>> գործարանային համարով կոշտ սկավառակով, պարունակող բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների պատրաստման համար անհրաժեշտ ֆայլեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ -բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների տվյալները և դրանց միջոցով գողացված գումարների և գողոնի բաշխման վերաբերյալ հաշվետվությունները, գետեղված <<Arka\txt\Partition1\Something\Work Place\D+P>> ուղեցույցով <<D+P>> պանակի ֆայլերում:
-<<Partition1\Something\ME AND LYOV>> ուղեցույցով <<распорт-1>> անվանումով ֆայլում գետեղված թվային լուսանկարը, որը նույնական է 4002933000152167, 4008855000139528, 4060990031766208 համարների քարտերի կրկնօրինակների դարձերեսի վրա առկա Միքայել Թումայանի քննությանը դեռևս չպարզված հանցակցի լուսանկարների հետ, այսինքն օգտագործվել է այդ քարտերի պատրաստման ժամանակ:
-<<Exeba-COMM 9.0>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Something\ME AND LYOV\Soft\Exeba 9.0>> և <<Partition1\Something\Work Place\D+P\Exeba 9.0>> ուղեցույցով պանակներում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:
-<<CC2Bank 1.3>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Something\ME AND LYOV\CC2Bank 1.3>>, <<Partition1\Something\Security Worm\Program Files\CC2Bank 1.3>> և <<Partition1\Something\Security Worm\Soft\cc2bank13\CC2Bank 1.3>> ուղեցույցներով պանակներում և նախատեսված ըստ բանկային քարտի համարի թողարկող բանկը պարզելու համար:
-<<MSR106 Utility Program>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Something\ME AND LYOV\Soft\CC Reader>> և <<Partition1\Something\Work Place\D+P\CC Reader>> ուղեցույցով պանակներում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:
-<<MSRE712>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Something\ME AND LYOV\Soft\LKE712 program>> և <<Partition1\Something\Work Place\D+P\LKE712 program>> ուղեցույցով պանակներում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:
-<<206DAX21.exe>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Something\ME AND LYOV\Soft\MSR206\MSR206\Demo AP>> և <<Partition1\Something\Work Place\D+P\MSR206\MSR206\Demo AP>> ուղեցույցով պանակներում և նախատեսված մագնիսական շերտ պարունակող քարտերի՝ այդ թվում բանկային քարտերի մագնիսական շերտերից տեղեկատվություն կարդացող և գրառող սարքերն աշխատեցնելու համար:
-<<PlasticCarderKit>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Something\ME AND LYOV\Soft\Plastic CarderKit\Plastic

CarderKit>> և <<Partition1\Something\Work Place\D+P\PlasticCarderKit\ PlasticCarderKit>> ուղեցույցով պանակներում և նախատեսված <<MasterCard>>, <<VISA>> և <<Amex>> տեսակի բանկային քարտերի մագնիսական ժապավենի <<track2>>-ից <<track1>>-ը գեներացնելու համար:
-<<Mars Banks Base>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Something\Security Worm\Program Files\Mars Banks Base>> ուղեցույցով պանակում, որն իրենից ներկայացնում է բանկերի մասին տվյալների շտեմարան:
-<<CC2Bank ListGenerator>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Something\Security Worm\Soft\CC2Bank ListGenerator 1.0>> և <<Partition1\>> ուղեցույցով պանակներում և նախատեսված տեքստային ֆայլերում բանկային քարտերի համարների որոնման և ըստ հայտնաբերված համարների՝ քարտը թողարկող բանկի մասին տեղեկություններ ստանալու համար:
-<<Track2 generator>> ծրագրային ապահովումը, գետեղված <<Partition1\Something\Security Worm\Soft\Track2>> ուղեցույցով պանակում և նախատեսված ըստ գործածողի կողմից մուտքագրված տվյալների բանկային քարտերի մագնիսական ժապավենի <<track1>>-ի և <<track2>>-ի գեներացման համար:/հատոր 9, գ. թ. 248-250, հատոր 10, գ. թ. 174/ Միքայել Թումայանի ուղեբեռից 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և որպես վճարային փաստաթուղթ օգտագործման համար պիտանի 4868960002004511, 4217639998597062, 4627300029509444, 4868272225737103, 4060955656469578, 5120600008598014, 4868272300901319, 4147340017356169, 4342562006047805, 4868272090689025, 4063156156863298, 4868272206436014, 4021950000187008, 4868272187799703, 4868272206436014, 4339930028900225, 4003447010518472, 5178058381298382, 4003442503080106, 5262251993333617, 5462130025289377, 4147340017356169, 5287501337210017, 4868272090689025, 4313070581987895, 5462130012001587 համարների բանկային քարտերի թվով 26 հատ կեղծ կրկնօրինակներով:/հատոր 2, գ. թ. 81-88, հատոր 9, գ. թ. 248-250/ Միքայել Թումայանի ուղեբեռից 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և որպես վճարային փաստաթուղթ օգտագործման համար պիտանի 4002933000152167, 4008855000139528, 4060990031766208 համարների թվով 3 հատ քարտերի կեղծ կրկնօրինակներով՝ դիմերեսին Ստանիսլավ Անտիպինի տվյալներով, իսկ դարձերեսին՝ Միքայել Թումայանի քննությամբ դեռևս չպարզված հանցակցի լուսանկարով:/հատոր 2, գ. թ. 83, հատոր 9, գ. թ. 248-250/
Միքայել Թումայանի ուղեբեռից 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և որպես վճարային փաստաթուղթ օգտագործման համար պիտանի 4002933000152126, 4008855000139791 և 4060990031742100 համարների թվով 3 հատ քարտերի կեղծ կրկնօրինակներով՝ դիմերեսին Գարրի Միխայլովի տվյալներով, իսկ դարձերեսին՝ Միքայել Թումայանի լուսանկարով /հատոր 2, գ. թ. 83, 91, հատոր 9, գ. թ. 248-250/
<<TDK>> ֆիրմայի արտադրության լազերային սկավառակով, որի մեջ գետեղված <<IMG_0847.JPG>> անվանումով ֆայլում թվային լուսանկարը նույնական է 4002933000152126, 4008855000139791 և 4060990031742100 համարների քարտերի կրկնօրինակների դարձերեսի վրա առկա լուսանկարի, ինչպես նաև Գարրի Գարրի Միխայլովի տվյալներով 77EK647037 համարի վարորդական իրավունքի վկայականի վրա առկա լուսանկարների հետ, այսինքն օգտագործվել է դրանց պատրաստման ժամանակ:/հատոր 2, գ. թ. 89, հատոր 9, գ. թ. 248-250/
Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և բանկային քարտերի կեղծման համար նախատեսված 2 հատ պլաստիկները՝ <<կՐՈՉՈՑ ըՈՎԱ>>ի լոգոտիպներով և Միքայել Թումայանի լուսանկարներով, առանց

մակերեսին և մագնիսական ժապավենի վրա կատարված գրառումների:/հատոր 2, գ. թ. 88, հատոր 9, գ. թ. 248-250/
Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և բանկային քարտերի կեղծման համար նախատեսված 7 հատ պլաստիկները` <<Citibank>>-ի լոգոտիպներով, առանց մակերեսին և մագնիսական ժապավենի վրա կատարված գրառումների:/հատոր 2, գ. թ. 87, 91, հատոր 9, գ. թ. 248-250/
Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված և բանկային քարտի կեղծման համար նախատեսված 1 պլաստիկը` <<ԶրրՍՈՒ հՑՈՎՊՈՐՑ>> բանկի լոգոտիպով, առանց մակերեսին և մագնիսական ժապավենի վրա կատարված գրառումների:/հատոր 2, գ. թ. 88, հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված <<Visa>> վճարային համակարգի բանկային քարտերի համար նախատեսված 34 հատ հոլոգրաֆիկ կեղծ լոգո-պիտակներով:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված <<Master Card>> վճարային համակարգի բանկային քարտերի համար նախատեսված 11 հատ հոլոգրաֆիկ կեղծ լոգո-պիտակներով:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված <<Visa>> վճարային համակարգի բանկային քարտերի դարձերեսին փակցվող, ստորագրության համար նախատեսված 15 հատ կեղծ շերտերով:/հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի ուղեբեռում 09.07.2010թ. զննմամբ հայտնաբերված <<Master Card>> վճարային համակարգի բանկային քարտերի դարձերեսին փակցվող, ստորագրության համար նախատեսված 15 հատ կեղծ շերտերով:/հատոր 9, գ. թ. 248-250/
Ռոբերտ Շահբաջյանի անունից <<Յունիբանկ>> ՓԲ ընկերություն 4.607.100 դրամին համարժեք 15000 ԱՄՆ դոլարի կանխիկ մուծման համար 21.10.2008թ. կտրոնով և նշված գումարը Միքայել Թումայանին փոխանցելու համար 21.10.2008թ. դիմումով:/հատոր 9, գ. թ. 79-81, 248-250/

Ռոբերտ Շահբաջյանի անունից 21.10.2008թ. <<Յունիբանկ>> ՓԲ ընկերություն 4.607.100 դրամին համարժեք 15000 ԱՄՆ դոլարի կանխիկ մուծման համար կտրոնով և նշված գումարը Լևոն Շահինյանին փոխանցելու համար 21.10.2008թ. դիմումով:/հատոր 9, գ. թ. 82-84, 248-250/

Ռոբերտ Շահբաջյանի անունից 21.10.2008թ. <<Յունիբանկ>> ՓԲ ընկերություն 3.631.568 դրամին համարժեք 11800 ԱՄՆ դոլարի կանխիկ մուծման համար կտրոնով և նշված գումարը Հրաչյա Շահինյանին փոխանցելու համար 21.10.2008թ. դիմումով:/հատոր 9, գ. թ. 85-87, 248-250/

Ռոբերտ Շահբաջյանի անունից 21.10.2008թ. <<Յունիբանկ>> ՓԲ ընկերություն 141222 դրամի կանխիկ մուծման համար կտրոններով:/հատոր 9, գ. թ. 88-90, 248-250/

ՌԴ քաղաքացի Գարրի Գարրի Միխայլովի տվյալներով 77EK647037 համարի վարորդական իրավունքի վկայականով:/հատոր 2, գ. թ. 90, հատոր 9, գ. թ. 248-250/

Միքայել Թումայանի Մոսկվա քաղաքում բնակվող մորաքրոջ` Մարսելիա Պողոսյանի անվամբ` <<DHL>> փոստային ծառայության միջոցով 3615439041 հսկիչ համարով ուղարկված ծանրոցի 27.01.2009թ. փոխադրման ամփոփագրով (նշված հսկիչ համարը Միքայել Թումայանին ICQ-հաղորդագրությամբ 27.01.2009թ. ժամը 06:10:36-ին հայտնել է <<POCHTA>> համացանցային կեղծանունով հանցակիցը, նշելով, որ այդ ծանրոցով է ուղարկել Գարրի Միխայլովի տվյալներով վարորդական իրավունքի կեղծ վկայականը): /հատոր 9, գ. թ. 161, 248-250/

Մ.Թումայանին մեղսագրված հանցանքները հիմնավորվել են նաև հետևյալ ապացույցներով`

ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյից ներկայացուցից

ստացված ցանկով՝ ԱՄՆ <<Սիթի>> բանկի և <<7-11>> խանութների ցանցի բանկոմատներում բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով կատարված և բողոքարկված գործարքների թվարկմամբ, որով հաստատվում են Միքայել Թումասյանի համակարգչային կոշտ սկավառակի <<D+P>> պանակի համապատասխան ֆայլերում թվարկված հանցադեպերը:/հատոր 3, գ. թ. 73-79, հատոր 11, գ. թ. 28-34/

<<HITACHI>> մակնիշի, <<SJK7365H>> գործարանային համարով կոշտ սկավառակի <<D+P>> պանակում փորձաքննությամբ հայտնաբերված և եզրակացության անբաժանելի մաս հանդիսացող լազերային սկավառակի մեջ <<Arka\txt\Partition1\Something\Work Place\D+P\1 – Oplachenno>> ուղեցույցով զետեղված տեքստային <<ggman6>> անվանումով տեքստային ֆայլով, որն ըստ դրա հատկություններում ֆիքսված տվյալների ստեղծվել է 2008 թվականի սեպտեմբերի 16-ին, ժամը 12:32-ին և պարունակում է 5362251990483703, 5362251982276909, 5362251988709937, 5362251987560216, 5362251983527490, 5362251983320367, 5362251987571155 համարների բանկային քարտերի մագնիսական ժապավենների վրա գրառված տվյալները (դամպերը) և դրանց միջոցով հափշտակված գումարների վերաբերյալ

հաշվետվություն:/հատոր 2, գ. թ. 150, հատոր 11, գ. թ. 28-34/ <<HITACHI>> մակնիշի, <<SJK7365H>> գործարանային համարով կոշտ սկավառակի <<D+P>> պանակում փորձաքննությամբ հայտնաբերված և եզրակացության անբաժանելի մաս հանդիսացող լազերային սկավառակի մեջ <<Arka\txt\Partition1\Something\Work Place\D+P\2 – Oplachenno>> ուղեցույցով զետեղված տեքստային <<gsleeve>> անվանումով տեքստային ֆայլով, որն ըստ դրա հատկություններում ֆիքսված տվյալների ստեղծվել է 2008 թվականի սեպտեմբերի 16-ին, ժամը 10:14-ին և պարունակում է 5362251984449819, 5362251990666034, 5362251981374127, 5362251989236849, 5362251988847158, 5362251989211198, 5362251987418027, 5362251985876226, 5362251986995074, 5362251990684722, 5362251989131404, 5362251990465080, 5362251981891377, 5362251989348438 համարների բանկային քարտերի մագնիսական ժապավենների վրա գրառված տվյալները (դամպերը) և դրանց միջոցով հափշտակված գումարների և գողոնի բաշխման վերաբերյալ հաշվետվություն:/հատոր 2, գ. թ. 158-159, հատոր 11, գ. թ. 28-34/

<<HITACHI>> մակնիշի, <<SJK7365H>> գործարանային համարով կոշտ սկավառակի <<D+P>> պանակում փորձաքննությամբ հայտնաբերված և եզրակացության անբաժանելի մաս հանդիսացող լազերային սկավառակի մեջ <<Arka\txt\Partition1\Something\Work Place\D+P\3 – Oplachenno>> ուղեցույցով զետեղված տեքստային <<todo 2>> անվանումով տեքստային ֆայլով, որն ըստ դրա հատկություններում ֆիքսված տվյալների ստեղծվել է 2008 թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը 07:08-ին և պարունակում է 5362251991261819, 5362251992770214, 5362251993626423, 5362251992648055, 5362251992823286, 5362251994131043, 5362251994549608, 5362251992540195 համարների բանկային քարտերի մագնիսական ժապավենների վրա գրառված տվյալները (դամպերը) և դրանց միջոցով հափշտակված գումարների վերաբերյալ հաշվետվություն:/հատոր 2, գ. թ. 163, հատոր 11, գ. թ. 28-34/

<<HITACHI>> մակնիշի, <<SJK7365H>> գործարանային համարով կոշտ սկավառակի <<D+P>> պանակում փորձաքննությամբ հայտնաբերված և եզրակացության անբաժանելի մաս հանդիսացող լազերային սկավառակի մեջ <<Arka\txt\Partition1\Something\Work Place\D+P\4 – Oplachenno>> ուղեցույցով զետեղված տեքստային <<Total>> անվանումով տեքստային ֆայլով, որն ըստ դրա հատկություններում ֆիքսված տվյալների ստեղծվել է 2008 թվականի սեպտեմբերի 21-ին, ժամը 21:46-ին և պարունակում է 5362251992391003, 5362251993614536, 5362251994393346,

